

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ \*)

## XIX

### Վ ա ն ֆ ա դ ա ֆ ր

Վանեցու նկարագիրը. 70-ական թուականների և ներկայ սերունդները. նոր աշխարհահայեցողություն. հայեացք կեանքի պայմանների մասին. վերաբերում գէպի օտարներն ու օտարերկրացի հայերը. փոխադարձ յարաբերությունները. նիստուկացը. հարևանական կեանք. լաւ կողմերը. օգնել կարօտին:

Վանեցին իր նկարագրով զանազանուով է ոչ միայն օտար երկրներում ապրող իր ազգակիցներից, այլ նոյնիսկ թիւրքիայի մէջ ապրող օտարազգացի հայերից: Դարաւոր տրգիտութիւնը, օտար տարրերի տիրապետութիւնը, իր հարևան թիւրք և քիւրդ ազգերի հետ ունեցած շփումն ու յարաբերութիւնը, իր բնակավայրի դիրքը, կլիման վանեցու հայի մէջ կազմել են ինքնուրոյն բնաւորութիւն:

Վանեցիները լուրջ, խոհուն, ծածկամիտ, երկչոտ, կեղծաւոր, հանդարտաբարոյ, խղաղասէր, բաւական անձնասէր, շրջահայեաց, հեռատես ժողովուրդ են: Վերը յիշուած հանգամանքներն են վանեցու նկարագրի մէջ կազմակերպել այս յատկութիւնները: Կարծես թէ առանց այս յատկութիւններից որեւէ մէկին նա չի կարող ապրել:

Վանեցին լուրջ, խոհուն և ծածկամիտ է դարձել, որովհետեւ նրա իւրաքանչիւր քայլափոխը, շարժումը, խօսքը այդպէս է պահանջում, որեւէ թեթեամիտ կամ չմտածուած վարձուուք կամ խօսք կարող է նրան ծանր վտանգի ենթարկել, վնասել, կորստի մատնել: Խորամանկ, երկչոտ, կեղծաւոր է, որովհետեւ եթէ իր հարևանին անհաճոյ երևաց իր կարծիքը, ինքը չափազանց պիտի տուժի, ուստի վախենում է նրանից, նրա հետ վարուելու համար դիմում է խորամանկութեան, կեղծաւորութեան, շոյում է նրան, շողորթում է, նրա

\*) Ցես «Մուրճ», № 9.

այո-ին այո է ասում, ոչ-ին ոչ, այլապէս չի կարող ապրել... Հանդարտաբարոյ, խաղաղասէր է, որովհետև այդ խառնուածքն ունեն ամբողջ հայերը, որովհետև այն հարթ ու տափակ հովիտն, ուր ապրում է վանեցիկն, այդպէս է պահանջում Վանեցի հանդարտութեամբ շարունակում է իր ճանապարհը, կոխում, անցընում է խոչընդոտները, խաղաղութիւն է սիրում, սէր չունի դէպի արկածալից կեանքը, վաճառականութեամբ, առևտրով, արհեստով և հողի հետ զբաղուող ժողովուրդը բնական է որ պիտի աշխատի արկածներից, խոռվութիւններից հեռու մընալ: Բաւական անձնասէր է վանեցիկն, որովհետև պարագաներ են ներկայանում, ուր նա աղատ է իր ես-ը պաշտպանելու, իր խօսքը առաջ տանելու, իր ուզածն անել տալու: միևնոյն ժամանակ իր շուրջն է նայում, դէպի հեռուն ակնարկ է գցում, եթէ վասնզ է գուշակում իր անելիքի մէջ, անմիջապէս ձայնը իրան է քաշում և հեռանում:

Դժբախտաբար հնարաւորութիւն չունենալով աւելի ընդարձակ կերպով լիակատար բացատրութիւն տալու վանեցու նկարագրի այսուայն կողմերի մասին՝ ակամայ այսքանով բաւականանում եմ, մնացածը թողնելով ուշադիր ընթերցողների դատողութեանը, առանց իմ տուած բացատրութեան էլ կարծեմ դժուար չէ հասկանալ վանեցու նկարագրի այսպէս կամ այնպէս լինելու պատճառները...

Չնայած տիրապետող հանդամանքներին և ընդհանուր դրութեան՝ այնուամենայնիւ ժամանակն իր ազդեցութիւնը շարունակ ցոյց է տուել և մեծամեծ յեղաշրջումներ առաջ բերել վանեցիկների հասարակական, ընկերական կեանքի մէջ:

Մինչև 80-ական թուականները տարբեր էին վանեցիկների կենցաղավարութեան պայմանները, 90-ական թուականներին յանկարծ ուրիշ կ'զարանք ստացաւ, իսկ ներկայումս էլ մի ուրիշ դրութիւն է ափրում: 70-ական թուականների սերունդը խաւարամիտ, անտարբեր, անհոգ և զուարթ էր, ապրուստի հոգսը ոչոքի տահոգութիւն չէր պատճառում, ուտում, խմում, զուարճանում էին. երբեմն և յաճախ զանազան հաճոյքների էին դիմում, խմել, արբենալ, անբարոյականութեան գիմել շատ հազուադիւր երևոյթներ չէին Վանում. յաճախ կըռիւններ էին պատահում երկու անհատների կամ թաղերի միջև. կռիւները շատ անգամ խիստ աղետալի հետևանքներ էին ունենում. կռուի մէջ լախտերի հետ միաժամանակ գործածուում էին սուր, որով միմեանց վիրաւորում, գլուխներ շարդում և այդ պատճառով էլ արդարադատութեան միջոցով պատժուում—բանտարկուում էին: Իսկ 90-ական թուականների սերունդը կար-

ծես բոլորովին հակապատկերն էր իւր նախորդի: Յանկարծ նախորդ շրջանի գոհնիկ, այլանդակ սովորութիւններն անյայտացան, անհատական, թաղային վէճեր, կռիւներ, որս ու վրէժժինդրութիւնները տեղի տուին ընդհանուր փոխադարձ քաղաքավարութեան, սիրոյ, բարոյականութեան, համերաշխութեան, որոնց գաղափարն օրէցօր աւելի և աւելի ընդունելութիւն էր գտնում: Պատանիների և երիտասարդների մէջ տիրեց մաքուր գաղափարականութիւն, հասակաւոր մարդիկ, նոյնիսկ ծերերը թարմացան, ոգևորուեցին: Ամառային գիշերները Վանի այգիները դարձել էին ակումբներ, այդտեղ հաւաքուեմ էին խումբ-խումբ պատանիներ, երիտասարդներ, նորամուտ սովորութեան համաձայն թէյ էին խմում, գինու բաժակներ էին դատարկում, խորհրդաւոր, գաղափարական կենացներ էին առաջարկում, ճառեր էին խօսում, քարոզում էին աւետարանական սէր, անկեղծութիւն, ուղղամտութիւն—մէկ խօսքով Վանը իդէալիստներ շխարհ դարձաւ... Սակայն այս աներևակայելի յեղաշրջումն, անսպասելի ոգևորութիւնը որքան անակնկալ և կարճ ժամանակի մէջ ծնուեց ու զարգացաւ, նոյնքան էլ կարճ գոյութիւն ունեցաւ: 96-ի յունիս ամիսը 15 օրուայ ընթացքում այդ սերունդը հողի տակ լցրեց, որի հետ և՛ նրա գաղափարներն ու իդէալները դեռ արմատ չհաստատած չորացան: Այս դէպքը ընդհանուր լքում, վիատութիւն և ըէակցիա առաջացրեց: Ահա կամաց-կամաց կազմուեմ է XX դարի սկզբին նոր սերունդ: Այս սերնդի օրով թէ ինչ կերպարանք պիտի ստանայ Վանը, այդ ապագան կարող է ցոյց տալ, միայն այսօրնը պարզ է, որ վանեցու գաղափարը կեանքի մասին այժմ բոլորովին փոխուած է, այժմ նա աւելի լայն հասկացողութիւններ ունի աշխարհիս մարդկանց կենցաղավարութեան և անհատների ու ազգերի գոյութեան պահպանութեան պայմանների մասին: Այս աշխարհահայեցողութիւնը վանեցին ձեռք բերաւ 1896 թուից յետոյ, երբ գաղթականութեան հոսանք սկսուեց Վանից դէպի աշխարհիս զանազան կողմերը: Վանեցիներն իրանց բնակավայրի սահմաններից դուրս գալով հասան Ռուսիա, Անգլիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ամերիկայի զանազան կողմերը. այս տեղերում վանեցու աչքը բացուեց, նրա հայեացքը կեանքի մասին փոխուեց, նա ծանօթացաւ իսկական կեանքի դժոխային և եղբմական կողմերի հետ, իր նուրբ ըմբռնումով դիտեց քաղաքակրթութեան կատարած դերը, միլիտարիզմի և կապիտալիզմի ամենակուլ ոյժը, տեսաւ տնտեսական աշխարհակալութեան հսկայական առաջադիմութեան, գիտութեան—շողու,

ելեբարականութեան գործած հրաշքները, բանուորական կեանքի դառնութիւնները, գործարանական աշխարհը, հասարակական, ընկերական, ընտանեկան կեանքի պայմանները, այո՛, տեսաւ այս բոլորը, թօթափեց իր ոտքի փոշին և գերազաս համարեց դառնալ իր հայրենիքն՝ այնտեղ ապրելու, այնտեղ մեռնելու նպատակով:

Շատ անգամ եմ խօսել արտասահմանի այսուայն քաղաքներում 2—3 տարի թափառող երիտասարդների հետ՝ շօշափելու նպատակով նրանց գաղափարը իրանց վիճակի և օտար երկրներում ապրող ժողովուրդների կենցաղի մասին: Ահա դժբանցից մէկի պատասխանը, որ ամփոփելով և սեղմելով առաջ եմ բերում. «Այս մեր ներկայ վիճակը մխիթարական չէ, մարդի կեանք չունենք մենք, մեր երկրում ապրելու միջոց չի մընացել, մենք կձկուել, արիւնաքամ ենք եղել, բայց և այնպէս համոզուած եմ, թէ ներկայ պայմաններում մենք միայն մեր հայրենիքում կարող ենք իբրև հայ ապրել, այնտեղ է մեր վիճակը լաւ, գոյութեան կռուի ասպարիզում մենք չենք կարող մըրցել մեզնից աւելի քաղաքակիրթ ազգերի հետ, շատ դո՛ւ պիտի լինենք, որ տակաւին հերոպացին իր ոտքը չի կոխել մեր հողի վրայ, անտեսական մըցման մէջ չենք կարող ոչ մի եւրոպացու հետ գործ ունենալ, մենք այս վիճակում մեր հայրենակից թիւրքերի, քիւրդերի, ասորիների հետ հազիւ ենք կարող գործ ունենալ, թ'նչ պիտի լինի մեր վիճակը, եթէ վաղը եւրոպացի կապիտալիստը Վան մտնի, մեր վաճառականները պիտի սնանկանան, մեր խանութպանները պիտի փակեն իրանց խանութները, մենք կամ բանուոր պիտի դառնանք, կամ մեր երկրից պիտի դաղթենք, ցիրուցան լինենք և գնանք այնտեղ, ուր բանուորի վարձը շատ է: Աստուած այդ օրը ցոյց չտայ: Այժմ այլևս ազգերի անկախութիւնն իրանց յաջողութեան համար որևէ արժէք չունի, ներկայ դարը տնտեսական աշխարհակալութեան դար է, մենք որքան մեզ վրայ լաւ գաղափար ունենանք, որքան էլ հայերս մեզ քաղաքակրթուելու ընդունակ ժողովուրդ համարենք, բայց և այնպէս եւրոպական որևէ ժողովուրդի մէջ աւելի շուտ կը ձուլուենք, քան թէ նրա հետ կը մըցնենք: Մեր սնապարծութիւնն էլ մեզ բաւական խաբում է: Եւրոպան օրէցօր աշխատում է իր տնտեսական աշխարհակալութեամբ տիրապետել Ասիային էլ, Վանը քիչ չէ վնասուում արդէն այդ աշխարհակալութիւնից: Այսօր եւրոպական ապրանքների ահագին երկար ճանապարհներից անցնող դանդաղաշարժ սայլերն իրանց անիւնների ձոճոցով մեզ անհանգիստ են անում, մեր քսակները դադարկում են, խոշոր գումարներ

ևն խլում մեր վտիտ գրպանից: Եւրոպացիները վերին աստիճանի ճարպիկութիւն են ձեռք բերել իրանցից անկարողներին քաղաքակրթութեան անուան տակ կողոպտելու: Կեանքը այլասեռուած է լուսաւորուած համարուած այդ երկրներում, ընտանեկան կեանքը բոլորովին ապականուած է, կապիտալիստները փողը պաշտում են իբրև ամենազօր կուռք, իրանց դիզած փողակոյտերի վրայ բարձրանալով հրճուում են՝ տեսնելով այն սողմոտ և ցեխոտ տարածութիւնը, որի մէջ ընկած է բանուորական դասակարգը, շաղախուած է և չի կարող դուրս գալ:

Ահա այսօրինակ գաղափարներ յաճախ կարող էք լսել վանեցիներից, որոնք 8—10 տարի առաջ Վանից կամ առառուեհն թիւրքիայից գատ ուրիշ աշխարհ չէին ճանաչուած:

Վանեցիները խիստ յոռի գաղափար ունին ներկայումս եւրոպական ժողովուրդների կամ աւելի ճիշտը՝ պետութիւնների վրայ, անուանում են նրանց շահամոլ, անխիղճ, անմարդասէր, ոչ-քրիստոնեայ. զայրանում են այն հայերի վրայ, որոնք եւրոպացիների խօսքին հաւատ են ընծայում, այդ կարգի անձրեւաւորութիւններին համարում են միամիտ, տղայամիտ, թիթեւօրիկ, դատարկագորտ, անբարոյական, օտար և հայ տարրին արիւնարբու թշնամի:

Ներկայ սերնդի դաւանութիւնը 70-ական, 90-ական և ներկայ ժամանակի հոսանքի խառնուրդից է կազմուած: Ամեն կողմից տեսնում էք շրջանի անտարբերութիւն, միւս կողմից յաջորդող շրջանի ոգևորութիւն և սրանց հետ միասին ժամանակակից հոսանքների ազդեցութիւնը: Ուշադրութեան արժանի կէտը սա է, որ վանեցին իր ապրելու կերպի մէջ ինչ ընթացք էլ որ բռնում է, գիտակցաբար է անում, իսկ նախորդ շրջաններում անում էր բոլորովին կուրաբար: Այժմ նա ունի շատ թէ քիչ սեփական դատողութիւն, և դա կարծեմ ամենամիթիւրահան երևոյթն է. ուրիշ ինչիւր է, թէ երիտասարդութիւնը իր անուան արժանի դիրքն ու դերը ունենալուց շատ հեռու է, ժայրայեղութիւնների նիթակայ է:

Ասում են, թէ հայերը օտարասէր են. նայելով վանեցիների վրայ՝ կարելի է անմիջապէս հաւատալ այդ խօսքի ճշմարտութեանը, որովհետև վանեցիներն իսկապէս չափից աւելի սէր և յարգանք են ցոյց տալիս դէպի օտարները, լինեն դժբանք ոռու, թիւրք կամ ֆրանսիացի. այդ սէրը համեմատաբար մի քիչ այժմ սառել է, որովհետև իրանք էլ զգում են իրանց օտարասիրութիւնը և դրանից կրած վնասները: Վանեցի մինչև 90-ական թուականները առանձին սէր և համակրանք էր ցոյց տալիս դէպի իր ոռուսահայ եղբայրը. Վանում եկել են

երբեմն ուսահայեր զանազան գործերով, օրինակ՝ իբրև առևտրական, արհեստաւոր, ուսուցիչ և այլն. վանեցիկները նրանց պաշտելու հալի անկեղծ համակրանք և յարգանք էին ցոյց տալիս, նայում էին նրանց վրայ իբրև իրանցից աւելի ազնիւ, բարձր, զարգացած, գաղափարական անձնաւորութիւններէ վրայ, իսկ այժմ որքան յոռետես է դարձել նա, նրա համակրանքը հակակրանքի է փոխուել. այն արիւնակցին, որին սրանից 7—8 տարի առաջ ճանաչում էր իբրև ուղղամիտ, այսօր անուանում է «տղէտների միամտութիւն շահագործող» է... Իզուր կ'անցնի ամեն-մի ջանք նրանց խօսքերի դէմ որևէ առարկութիւն անելու կամ նրանց այդ յոռի համոզումները փոխելու, խախտելու համար, ո՞վ գիտէ, թէ մինչև երբ վանեցիկները պիտի պահեն այդ յոռետեսութիւնը. վասն այն է, որ ուրիշ քաղաքացիներն էլ միևնոյն գաղափարներն են յայտնում, միևնոյն տրտունջներն են անում:

Վանեցիկների միմեանց հետ՝ և դէպի հասարակական բնաւորութիւն ունեցող խնդիրներն ունեցած փոխադարձ յարաբերութիւնները բաւական լաւ են ներկայումս, թէև երբեմն անձնական հաշիւներից ծագող հակառակութիւնները, վէճերն այնքան բռն ըրրըքուում, որ մեծամեծ փնասներ են հասցնում հասարակութեանը: Մի գէշ յատկութիւն բաւական նշանաւոր տեղ է բռնում վանեցիկների փոխադարձ յարաբերութիւնների մէջ. միևնոյն զբաղման, պաշտօնի կամ ծառայութեան մէջ գտնուող և միևնոյն աստիճանի վրայ եղող անձնաւորութիւնները չեն կարողանում միմեանց հետ համերաշխ մնալ, այլ նախանձից դրդուած՝ հակառակում են միմեանց, փնասում և աշխատում են տապալել միմեանց. այդպէս են վարւում վաճառականները, այդպէս են վարւում արհեստաւորները, այդպէս են վարւում միմեանց հետ հարեանները, այդպէս են վարւում պետական և հասարակական պաշտօնեաները:

Հասարակական խնդիրների շուրջը եղած գործունէութիւնը, գրեթէ դադարելու պէս է. երիտասարդութիւն չկայ ասպարէզի վրայ, գործը մնացել է աղաների ձեռքին: Աղայականութիւնը գեղեցիկ կերպով յաղթանակ տարաւ և այսօր բարձր ձայնով ծիծաղում է երիտասարդութեան «յախուռն, անյարատե, անկայուն, անծրագիր» գործունէութեան վրայ: Մեր երիտասարդները ձերացել են, ձերունիները երիտասարդացել: Մեր այժմուայ հասարակական պաշտօնեաները — ազգային վարչութեան անդամները, հոգաբարձուները, թաղային խորհրդի անդամները նրանք են, որոնք իբրև հին գլուխ 90-ական թուականներէ երիտասարդութեան կողմից ասպարէզից դուրս շարտուեցին:

Ներկայ երիտասարդութիւնն անգոյն, անկերպարան և տարտամ վիճակ ունի, զորիկ որևէ եռանդից և աւիւնից:

Վանեցու նիստուկացի մէջ տիրում է նահապետական գրութիւն, թէև օրէցօր քաղաքակիրթ երկրներէ աղղեցութիւնը և ժամանակի հոսանքն զգալի փոփոխութիւններ են գործում, բայց հին դրութիւնը դեռ տիրապետող դեր ունի:

Վանեցին հիւրասէր է, այցելուին մեծարում է սուրճով, թէյով, նախաճաշով կամ ճաշով: Կանայք մի շաքաթով, տասընհինգ օրով հիւր են գնում իրանց բարեկամի տունը: Բարեկամները տարուայ մէջ մէկ-երկու անգամ հաւաքուում են միմեանց տուն, տեսնում են միմեանց հետ, ժամանցներ են ունենում, տակաւն այդ հաւաքումները պարզ տեսութիւնից աւելի օգտակար նպատակի չեն կարող ծառայել:

Դրացիական կեանքի մէջ կան լաւ կողմեր: Հարևանը հարևանին ամեն ընդհանուր պատրաստ է օգնելու: Հարևանը հիւանդացու, տանը ոչոք չկայ, ահա դրացին հասնում է նրան օգնելու, նրան պառկեցնում է, դեղ ու դարման է անում, նրան սիրով ծառայում է: Անակնկալ այցելու է ունենում, մի բան պակասում է այցելուի առաջ դնելու համար, դիմում է հարևանին, եթէ ունի, սիրայօժար կը տայ: Դրացին աղքատ է, շաքաթներով մսի, իւղի կամ այսինչ կերակրի երեսը չէ տեսել, հարևանը զիտէ այդ—որովհետև ամեն օր միմեանց տուն խօսակցելու են գնում,—իր ունեցածից բաժին է հանում նրան: Այգի չունիս, հարևանդ ունի, սուրբ պարտք է համարում ամեն օր իր այգու պտուղներից բաժին ուղարկել քեզ, պտուղները հաւաքելու ժամանակն էլ քեզ այգեկութի տանելուց յետոյ նորից բաժին է ուղարկում: Դրացին վատ ընթացք ունի, օր.<sup>3</sup> գող է կամ անբարոյական, հարևանը քաղցրութեամբ համոզում է յետ մնալ այդ մոլութիւնից, եթէ չհամոզուեց, միանում են միջանի հարևաններ, օրինական միջոցների են դիմում նրան ուղղութեան բերելու համար:

Օգնել չունեցողին—դա մի սկզբունք է, որ դարերն են արքազործել վանեցու համար. վանեցին զթոտ, կարեկցող է և այդ կողմից շատ բարձր է իր հարևան քաղաքացիներից (օր.<sup>3</sup> բիթլիզցիներից): Վանում աղքատներ շատ կան, կան, որ բացարձակապէս մուրում են, կան նաև այնպիսիները, որոնք ամաչում են բացարձակապէս այդ միջոցին դիմելուց. վանեցին իր նիւթական աննախանձելի վիճակով օգնում է թէ մէկին և թէ միւսին: Ամեն առաւօտ, մանաւանդ ձմրան օրերում 3—400 հոգի գաղթական (մասամբ նաև տեղացի) մուրացիկաններ—ծեղունի, պառաւ, երիտասարդ, չափահաս, պատանի, մանուկ,

կին, աղջիկ, կաղ, կոյր, խուլ ու համր, մերկ ու չլուտ մէկ-մէկ տոպրակ ուտերից կախած՝ դուրս են գալիս իրանց ընակարանից և ընկնում փողոցները, դռները ծեծում, ողորմութիւն խնդրում, և կրկնում են դա ոչ թէ մէկ օր կամ մէկ շաբաթ, այլ տարիներ շարունակ. վանեցիկները նրանց տոպրակները լցնում հացով, շատ անգամ տանում են ներս, կերակրում են նրանց իրանց հետ, նրանց մերկութիւնը ծածկում և ուղարկում իրանց տեղերը: Իսկ մուրալ չկարողացողների համար էլ թաղեցիկները հոգում են. ոմանք կերակուր են ուղարկում, ոմանք հագուստ, ուրիշներն իրանց ամեն տեսակ ուտելիքներից բաժին են հանում. տարուայ մէջ 1—2 անգամ թաղի միջից 2—3 հոգի ընկնում են թաղը կամ օտար թաղեր և ալիւր, վառելիք, զանազան տեսակ ուտելիքներ ու փող են հաւաքում: Բացի սրանից՝ ամեն կիրակի գրեթէ քաղաքի բոլոր եկեղեցիներում առաջնորդարանից ուղարկուած շրջաբերականի տրամադրութեան համաձայն «աղքատի թաս» անունով զանձանակ են շրջեցնում, գոյացած հասոյթը աղքատներին է տրոււմ. նոյնպէս շաբաթը մէկ-երկու անգամ քաղաքի շուկայում և Ալդեստանի այսուայն հրապարակներում չքաւորների, պանդուխտների, բանտարկուածների համար փող են հաւաքում:

## XX

Ընտանեկան կեանքը, ընտանիքի կազմը, ամուսնութիւնները, ծնողների տեսակէտը որդու ամուսնութեան խնդրում, հարսանիք, օժիտ, օժիտ փնտրողներին նոր հոսանքը, հաս և չհաս ամուսնութեան մէջ, հաւատարմութեան զաղափարը ընտանեկան յարկում, նոր հոսանք, ընտանեկան դատարարութիւնը, յոռի կողմերը, կնոջ դիրքը ընտանիքի մէջ, նրա պարտքն ու իրաւունքը, վանեցի նորահարսը, տանտիկինը, զբաղումները, անային գործերը, ջուլհակ կանայք, վանեցի կնոջ կազմուածքը, շրջապատող հանդամանքների ազդեցութիւնը առողջութեան վրայ, գեղեցկութիւնը, տոկոսութիւնը, ջերմ հաւատը, իզական սեռի դատարարութիւնը:

Ընտանեկան կեանքը Վանոււմ դեռ պահոււմ է իր գոյնն ու կիրպարանքը: Ընտանիքը կամ գերդաստանը կազմոււմ է 5—10—15 մինչև իսկ 20 անդամներէից: Հայրը տան նահապետ-կառավարիչն է: Հօր կենդանութեան ժամանակ զաւակները միասին մի տան մէջ են ապրում, սակայն նրա մահուանից յետոյ եղբայրները բաժանոււմ են միմեանցից (հօր կենդանութեան ժամանակ բաժանուողների թիւը տարէցտարի մեծանոււմ է): Տան մէջ ընդհանրապէս համերաշխութիւն է տիրում մինչև տղամարդերի ամուսնանալը, որից յետոյ օտար աղջիկներ տան մէջ մտնելով՝ իրանց ցանկութեան համաձայն աշխատում են մի քանի տարի յետոյ պառակտում առաջ բերել և եղբայրներին միմեանցից բաժանել: Եղբայրները միմեանցից բաժանուելիս իրանց մէջ բաժանում են հայրենական ամբողջ ժառանգութիւնը, և իւրաքանչիւրն իր բաժինն ստանալուց յետոյ կազմում է առանձին տուն:

Ամուսնութիւններն առաջները, նոյնիսկ մինչև 80-ական թուականները շուտ էին կատարոււմ: Սակայն այժմ տնտեսական տագնապը հետզհետէ ուշացնում է:

Վանոււմ երիտասարդները արբունքի են հասնում գրեթէ 18—20 տարեկան հասակից սկսած, սակայն ձր ծնողն է նախում տղայի արբունքին կամ ձվ է ի նկատի ունենում առողջապահական այսուայն պայմանները: Ծնողներն առաջներն իրանց զաւակներին ամուսնացնում էին երկու գլխաւոր նպատակով. ա. նպատակը նրանումն էր կայանում, որ իբրև ծնող իրանց ամենամեծ փափաղն էր տեսնել իրանց զաւակի «կանաչ-կարմիր թագ ու պսակը», իրանց «հասրաթն առնել» և «ապա մեռնել», մանաւանդ այն ծնողները, որոնք մէկ զաւակ ունէին կամ իրանք բաւական հասակաւոր էին, վախենում էին մի գուցէ յանկարծ մեռնեն առանց իրանց փափագին հասնելու,

առանց իրանց կարօտն առնելու. բ. նպատակը կայանում էր նրանում, որ հարս բերելով՝ տղայի մայրը այն ըմբռնումն ունէր, թէ իրան օգնական է բերում. «Ես հասակս առել եմ, էլ չեմ կարող շարժուել, չեմ կարող տան գործերը մենակ կառավարել, կեր-խում, մէկ կողմից, կով-կիթը միւս կողմից, բաղ-բաղչան մի կողմից, լուաց-թափը միւս կողմից, տղաների կար-կիթը, եկող-գնացողն էլ անպակաս, մի մէկին հասնեմ, ի՛նչպէս կարգի բերեմ. չէ՛, անհրաժեշտ է, որ հարս բերենք, որ օգնի ինձ, այլևս չեմ կարող դիմանալ»։ Ահա թէ ինչ նկատումներով էին ամուսնացնում ծնողներն իրանց զաւակներին մինչև 80-ական թուականները. այժմ էլ գրեթէ շատ կան այդպիսի ծնողներ, բայց ամուսնացող երիտասարդը բաւական իրաւունքներ է ձեռք բերել։ Առաջ երիտասարդն ամուսնանում էր 15—20 տարեկան հասակում, իսկ այժմ 25—30, աղջիկները 13—16, իսկ այժմ 18—25։ Առաջները՝ դեռ անտեղեակ աշխարհիս վարդերին ու փուշերին, կեանքի պայմաններին, պատանին կամ երիտասարդն ամուսնանում էր. ի՛նչ է ամուսնութիւնը, նա չգիտէր, հայրն էր նրան ամուսնացնողը, հայրն էր տուն կառավարողը, նա էր փող շահողը և իր տղային ու հարսին կերակրողն ու հագցնողը. իսկ այժմ—որքան փոփոխութիւն. 10 տարեկան մանուկը զգում է աշխարհի հոգսերը, կեանքի դառնութիւնները. որդին մանուկ հասակից ըսկսած պարտաւոր է օգնել իր հօրը։ Զաւակը մինչև որևէ արհեստի չձմտանայ և իբրև վարպետ գործի չկանգնի կամ մինչև որ գործ վարելու համար շատ թէ քիչ կանոնաւոր դրամագլուխ ձեռք չբերի—մէկ խօսքով՝ մինչև որ իր ապագան չապահովի, չի կարող ամուսնանալ։

Մինչև 80-ական թուականներն ամուսնութիւնները կատարւում էին միանգամայն ծնողների կամքով, ամուսնացող զաւակները երբէք ձայն չունէին այդ խնդրում. ծնողները նաև էլ էին իրանց նիւթական վիճակին, հանգամանքները յարմար նկատուած պարագաներում հայր ու մայր իրանց մէջ խորհրդակցելուց յետոյ սկսում էին աղջիկ փնտրել, և մի գեղեցիկ օր, մինչդեռ տղան նոյնիսկ տեղեկութիւն չունի մօտիկ ապագայում իրան գլուխ գալիքից, մայրը միքանի բարեկամներ ի հետ աղջիկտեսի և նշանդրէքի էր գնում. միքանի օրից յետոյ նշանը օրհնւում էր, աշնան կամ ձմրան մէջ հարսանիքը կատարւում, որից յետոյ տղան նոր պիտի տեսնէր իր կենակցին, նոր պիտի ճանաչէր իր ընկերուհուն, ինչպէս նաև ընկերուհին էլ իր ընկերին։

Կամաց-կամաց այս սովորութիւնը խախտւում է իր տե-

դից, թէ և այժմ էլ ծնողներն են փնտրում իրանց հարսնացուին, բայց նախապէս տղայի կամքն ու ցանկութիւնը հասկանում են, նոյնիսկ տղան ցոյց է տալիս ծնողներին իր ընտրեալին. ծընողները հաւանած աղջկան զաւակը կարող է չհաւանել և իր ձայնը լսելի անել. նոյնը կարող ենք ասել նաև աղջիկներէ մասին: Մինչևիսկ 10 տարի առաջ անհամեստութիւն էր համարուում աղջկայ ներկայութեամբ ամուսնութեան մասին որևէ խօսք ասել, սակայն այժմ աղջկան հարցնում են ծնողները, թէ արդեօք իրանց ընտրած փեսացուին հաւանում է, թէ՞ չէ. աղջիկը նախապէս որևէ կերպով պէտք է տեսած լինի իր ապագայ ընկերին կամ ծանօթութիւններ հաւաքած լինի նրա նկարագրի և վիճակի մասին:

Հարսանեկան ծախսերը վերջերս զգալի կերպով թեթևանում են. դրա պատճառն էլ դարձեալ պէտք է փնտրել տնտեսական տաղանապի խնդրում: Սակայն միւս կողմից աղջկայ օժիտի ինչդերը աւելի և աւելի կնճառտ կերպարանք է ստանում: Այժմ մատով կարելի է ցոյց տալ այն երիտասարդներին, որոնք ամուսնանում են առանց օժիտի աղջիկներին: Այս հոսանքին ներկայ տնտեսական դրութեան չափ ոյժ տուեց 1896 թուի աղետը. 1000-ի չափ ամուրի և 500-ի չափ ամուսնացած երիտասարդներ և չափահասներ 15 օրուայ մէջ ոչնչանալով՝ նոյն չափի կին ու աղջիկ հրապարակի վրայ մնացին: Ուրեմն մէկ կողմից տնտեսապէս կրած հարուածը, միւս կողմից արական սեռից ամուսնացածների և ամուսնանալու շրջանի մէջ մտնողների պակասելը և իգական սեռից նոյն շրջանի մէջ գտնուողների շատանալը առաջ է բերում մի նոր հոսանք ամուսնացող երիտասարդների մէջ—այն է փնտրել օժիտաւոր աղջիկներ և այրիացած հարսներ. աղջիկներից աւելի դերադաս էին համարում կանայք, որովհետև շատերը նրանցից իրանց ամուսինների մահուամբ տէր էին դարձել ժառանգութեան—տան, այգու, արտի, փողի և կահկարասիի. ամուսնանալիս իբրև օժիտ իրանց հետ պիտի տանէին այդ հարստութիւնը: Ահա այդ օրից սկսած տղամարդիկ թանգացրին իրանց, իսկ աղջիկներն աժանացան, այդ օրից սկսած նոր հոսանքը և նոր սովորութիւնը մտաւ և ընդհանրացաւ Վանում, և դրա հետևանքը չէ՞ արդեօք, որ այսօր հարիւրներով ազնիւ նկարագրի տէր, գեղեցիկ աղջիկներ հօր տանն են մնում, որովհետև աղքատ են, հարստութիւն, օժիտ չունեն, իսկ այլանդակ ընաւորութեան տէր, տգեղ աղջիկներն իրանց հարստութեան շնորհիւ առաջ են քշուում: Օժիտի երկու տեսակը կայ. մէկը պարզ ջնէզ, իսկ միւսը միրազ:

Զնէզ կոչուում է այն օժիտը, որ աղջկայ արդուզարդին է վերաբերուում. իսկ միրազ՝ դրամական կամ կալուածային հարըստութիւնը, որ աղջիկն իր հետն է տանում: Այն ծնողները, որ պարզ ջնէզ են միայն տալիս իրանց աղջկան, պարտաւոր են առնուազն 10—15 լիւրայի ծախս անել: Այս գումարը գուցէ կովկասահայ ընթերցողին չնչին բան երևայ—ընդամենն 80—120 բուլլի, բայց գիտէք, վասնցի ընտանիքի հայրը 4—5 տարուայ ընթացքում իր տունը կտաւարելուց յետոյ հազիւ կարողանայ այդքան գումար աւելացնել, և եթէ գործը միայն հայրերի վրայ մնայ: Նրանք կը դժուարանան, հայրերից աւելի մայրերն են, որ պատրաստուում են իրանց աղջկայ օժիտը: Մայրերն աղջկայ ծնուած օրից սկսած մտածում են այդ մասին, օրական 1 կոպէկ—5 կոպէկ խնայողութիւններ են առնում, փոքրիկ գումարներ են պատրաստում և տարեցտարի աղջկայ օժիտին վերաբերեալ մի բան են դնում:

Վանում ամուսնական խնդիրների մէջ «հաս չհաս»-ի խնդիրը շատ մի վնասէք, «օրէնք ի ձեռս առաջնորդաց են», ոչ միայն «առաջնորդաց», այլ նոյնիսկ «քահանայից»: Զեղծումներ շատ անգամ են պատահում այս դէպքում, շատ անգամ «հաս»-ը «չհաս» է դառնում, իսկ «չհաս»-ը՝ «հաս». այդ բանում մեղսակից են և՛ քահանան, և՛ կրօնական ժողովը, և՛ քաղաքի ազդեցիկ անձնաւորութիւնները: Ամուսնացողների ծնողները տեսնելով՝ որ իրանց փեսացուի և հարսնացուի միջև «չհասութեան» խնդիր կայ, անմիջապէս դիմում են իրանց ազդեցիկ բարեկամին, սա էլ քահանաների հետ տեսնում է միջամտելու նպատակով. եթէ խնդիրը լուծուց—լաւ, իսկ եթէ ոչ՝ նրանից աւելի ազդեցիկ իր բարեկամին է դիմում, սա արդէն իր ուզածի պէս կարող է կարգադրել խնդիրը, որովհետև ազդեցութիւն ունի ոչ միայն քահանաների, այլ նաև առաջնորդի վրայ: Շատ անգամ էլ ազդեցութեան փոխարէն գործ է տեսնում «աջահամբոյր»-ը:

Ընտանեկան յարկում տիրում է ամուսնութեան սրբութեան գաղափարը. ամուսինները մինչև մահ միմեանց հաւատարիմ են մնում: Այրերը զեղծումների մէջ են ընկնում երբեմն, մանաւանդ պանդխտութեան գնալիս, և նրանց այդ զեղծումը հասարակաց կարծիքով շատ պախարակելի չի համարուում. իսկ կանայք ամենախիստ, դառն և կծու քննադատութեան են ենթարկուում իրանց ամուսնու դէմ մեղանչելիս: Այս տեսակէտից վանեցի կանայք հազար անգամ աւելի բարձր են իրանց ամուսիններից: Հարիւրներով կարելի է ցոյց տալ կանայք, որոնք տամնեակ տարիներով նստել են տանն, սպա-

սել իրանց պանդուխտների ճանապարհին՝ իրանց ամուսնական հաւատարմութիւնը խախտելու ըտպէական մտածում անգամ չուեննալով: Սակաւաթիւ չեն նոյնպէս այն կիւն ամուսինները, որոնք հազիւ կէս կամ մէկ տարի ամուսնական կեանքի հաճոյքը վայելելու բաղձն են ունեցել՝ իրանց սիրելիներէ հետ միասին ապրելով, որից յետոյ հեռացել են իրանց լծակիցներն օտար երկրներ, ուր տասնեակ տարիների ընթացքում մի կոպէկ անգամ իրանց կենակցին չուղարկելուց յետոյ օտարուհիներից ուրիշ կողակիցներ են ընտրել իրանց համար և իրանց հաճոյքին են հետևել, իսկ նրանց հարազատ կանայքը լսելով իրանց ամուսինների արարքները, տեմնելով նրանց ապերախտութիւնը, չոր հացի կարօտ վիճակի մէջ գտնուելով հանգերձ դարձեալ անդրդուելի են մնացել իրանց հաւատարմութեան մէջ. ոմանք եկեղեցական օրէնքի թոյլտուութեամբ երկրորդ ամուսնութեան են դիմում, իսկ շատերը դա էլ չեն ընդունում:

Ամուսնութեան մէջ տիրող հաւատարմութեան այս գաղափարը շատ հին ժամանակներից է շարունակուում, սակայն վերջերս զգալի կերպով թուլանում է այդ համոզմունքի սըրբութիւնը, մասնաւանդ այս վերջին գաղթականական հոսանքից սկսած վանեցիներն օտար երկրներում տիրող վարքուբարքերին կամաց-կամաց ընտելացել էին, և երբ նրանցից շատերը վերադարձան հայրենիք, իրանց հետ բերին և՛ իրանց տեսած երկրների վարքուբարքի նմոյշները. կանանց մէջ էլ բաւական արմատ է դրել անբարոյականութեան գաղափարը: Կանանցից նրանք են դիմում այդ միջոցին, որոնց ամուսինները յուսահատ վիճակի մէջ են դրել իրանց, իսկ տղամարդկանցից՝ ամուսնացածներից աւելի ամուրիներն են. բայց որովհետև Վանում տղամարդիկ առանց բացառութեան 25—30 տարուան հասնելիս ամուսնանում են, այդ պատճառով էլ այդ հոսանքը դեռ շատ չէ ընդհանրացել:

Ամուսնական կեանքում երկու լծակիցների մէջ տիրում է քաղցր համերաշխութիւն և ներդաշնակութիւն, կիւնը հետևում է իր ամուսնուն, ամուսինը իշխող դեր ունի իր կնոջ վրայ, նա իր հրահանգները, որոշումները, կամքը և ցանկութիւնը գործադրել տալու համար խնդրել չի կարող, այլ առաջարկել դրականապէս, հրամայել և պահանջել. ծիծաղի են արժանանում այն տղամարդերը, որոնք իրանց կանանց հետ մի քիչ քաղաքավարի են վարւում: Քիչ են պատահում այսպիսի դէպքեր, որ երբ կիւնն իր ամուսնու արարքների կամ անտեղի կարգադրութիւն-

ների նկատմամբ որևէ կարծիք կամ ընդդիմութիւն է ցոյց տալիս, ամուսնու կողմից լսում է ամենածանր, կոպիտ և անարգական խօսքեր, իսկ սրանից յետոյ նաև ծեծ: Այսպիսի դէպքեր առաջներն աւելի յաճախ էին պատահում, այժմ հետզհետէ տղամարդիկ փոխում են կանանց մասին ունեցած տարօրինակ և անարդար գաղափարները, մանաւանդ որ ամուսնութիւնները կատարւում են փոխադարձ համաձայնութեամբ, սիրահարութիւններով և շատ թէ քիչ գիտակցութեամբ:

Ընտանեկան դաստիարակութիւնը շատ դառն և տխուր վիճակի մէջ է գտնոււմ: Ծնողները կոշտ, բիրտ և անկարող են իրանց կոչուամբ ըմբռնելու զաւակների նկատմամբ: Ինչպէս ընդհանրապէս ուրիշ տեղերում, նոյնպէս և Վանում զաւակների դաստիարակութեան հոգսը գլխաւորաբար ծանրանում է մայրերի վրայ, որովհետև հայրերն առաւօտը կանուխ հեռանում են տնից, երեկոյեան ճրագլուով են տուն դառնում, մայրն է, որ գլխից-ցեղեկ իր զաւակների մօտը նստած է, նրա պարտականութիւնն է հսկել նրանց վրայ և դաստիարակել: Բայց վանեցի մայրերն իբրև դաստիարակ շատ ետ են մնացել. գաղափար չունին դաստիարակութեան մասին: Զաւակը քանի խանձարուրի կամ օրօրոցի մէջն է, մայրն արթուն հրեշտակի պէս գլխից ու ցեղեկ հսկում է նրա վրայ, իսկ երբ մեծացաւ, 3—4 տարեկան եղաւ և սկսեց ինքնօգնութեամբ ներս ու դուրս գալ ու գնալ, մայրը իրան նուիրում է տնային գործերին և իր որդուն թողնում է ազատ. տղան օրուայ մեծ մասը անց է կացնում փողոցում, հողի և ցեխի մէջ, հագուստները փոշու և ջրի մէջ փտում են, փողոցում գտնելով իրան նման շատ մանուկներ՝ սկսում են խաղալ, միմեանց հետ կոռել, ծեծել միմեանց, հայհոյել, լալ: Փողոցում ձեռք բերուած շատ յատկութիւններ տղան տան մէջ սկսում է գործադրել, սկսում է պահանջներ անել ծնողներից, գոհացում չստացած դէպքում հայհոյանքներ է թափում նրանց գլխին, մինչև անգամ ծեծում է, խռովում է, ճաշի ժամանակ սեղանի վրայ չի նստում, սկսում է տան այսուայն անկիւններն ընկել, պղզտիկ-պղտիկ և ապա մեծ-մեծ գողութիւններ անել և տանել դուրս, փոխարինել ուրիշ իրեղէններով կամ ծախել. և այսպէս որքան մեծանում է տղան, նոյնքան մեծանում են նրա հետ մանկութեան հասակում ձեռք բերուած յոռի յատկութիւնները. հայրն էլ իր ընթացքով շատ առիթներ է տալիս իր զաւակի փչանալուն և շփանալուն: Երեկոյեան շուկայից դառնալիս նա սկսում է վայրիվերոյ պատմութիւններ անել շուկայի բարքերից, նկարագրել անվայելուչ տեսարաններ և դէպքեր, կամ

Թէ չէ իր անցեալից սխրագործութիւններ պատմել, մինչև անգամ տղային յորդորել, որ ինքն էլ սովորի իրան պէս այսուայն դէպքերում ճարպիկ, խորամանկ լինել, հայհոյելու տեղում հայհոյել, խարելու տեղում խարել, զրկելու տեղում զրկել. ապա երբեմն էլ, որ արբեցած վիճակում տուն է դառնում, ինչէր չի անում, ինչէր չի խօսում: Ահա մանուկներն ինչեր են տեսնում իրանց տան մէջ, ինչ են սովորում իրանց ծնողներից, մանկութեան հասակում նրանց թարմ միտքը ինչ տպաւորութիւններ է ստանում: Ընտանեկան այդ յոռի դաստիարակութեան շնորհիւն է անշուշտ, որ Վանի դպրոցներին չէ յաջողում իրանց աշակերտներին ուսման չափ կրթել և դաստիարակել: Մանկութեան 7—8 տարիներն անց են կացնում տանը, ապա դպրոց մտնելիս օրական 6—7 ժամ հազիւ են մնում ուսումնարանում, նորից տուն, ընտանեկան շրջանումն են անց կացնում օրուան մեծ մասը, դպրոցը ինչ կարող է անել. դպրոցի շինածը առենը քանդում է:

Հները շարունակ նոր սերնդից են սպասում դաստիարակ ծնողներ, բայց նոր սերունդն իր յոռի կողմերով գերազանցում է հներին. դա ակնյայտնի իրողութիւն է Վանում: Նոր սերնդից ծնող դարձողներն այսօր հին սերնդի առաւելութիւնները չունենալով հանդերձ նրանց թերութիւնները ժառանգել են աւելի ընդարձակ ծաւալով:

Ինչպէս ամբողջ արևելքում, նոյնպէս և Վանում տիրապետող դրութեան շնորհիւ հայ կիներ շատ ստոր վիճակի մէջ է գտնուում: Կիներն իր ամուսնու հլու հպատակն է, նրա կամակատարը և կամայականութիւնները զոհը: Նրա բախտաւորութիւնը կախուած է իր ամուսնու բնաւորութիւնից. եթէ ամուսինը քիչ թէ շատ բարեկիրթ, ազնիւ, քաղաքավարի բնաւորութիւն և նիստուկաց ունեցաւ, կիներ կարող է «օր-արև տեսնել» հակառակ պարագայում նրան մնում է հայրենական տան մէջ աղջիկութեան շրջանի մէջ ունեցած ազատութիւնն ու վայելքները յիշել, նրանցով մխիթարուել և հաշտուել իր ճակատագրի հետ: Նա ոչ միայն իր ամուսնու կամակատարն է, այլ նաև տան բոլոր անդամների, կեսուրի, կեսըրայրի, տէգրերի, տալի (ամուսնու քրոջ). նա իրաւունք չունի նրանց ապօրինութիւնների դէմ բողոքելու կամ նրանց անտեղի պահանջների դէմ որևէ առարկութիւն անելու, որովհետև անմիջապէս տան, բարեկամների, դրացիների և ապա ամբողջ հասարակութեան մէջ նա կը հռչակուի իբրև «ըմբոստ», «լեզուազար», «զալըմ» հարս:

Իր ամուսնութեան առաջին տարիներում նա իրաւունք

չունի խօսելու իր կեսրայրի, տէգրերի հետ, նոյնպէս իր երկսը ծածուկ պիտի պահի թէ նրանց և թէ բոլոր օտարականների առաջ:

Վանեցի նորահարսը չափազանց ամաչկոտ և համեստ է իր կեսրանց տան մէջ. շատ անգամ տկարանում է, ամաչում է այդ յայտնել իր կեսուերին կամ նոյնիսկ իր ամուսնուն. մինչև որ իրան չառաջարկեն, չի կարող ճաշել, թէկուզ չափազանց սոված լինի. որքան հնամուտ, այնքան աւելի իրաւունքներ է ձեռք բերում. նա տան բոլոր անդամները հրամանները, անտեղի պահանջները սիրայօժար կատարում է առանց ձայն ու ծպտունի, բայց երբ տէգրկին ունեցաւ, այն օրից սկսած նա սկսում է տրտունջների անազին շարքեր իր ամուսնուն. ցերեկները երկու տէգրկիներն ամենաչնչին պատճառներով միմեանց հետ լաւ և երկար վիճաբանելուց յետոյ՝ երեկոններն իրանց սենեակներն առանձնանալիս սկսում են չափազանցրած գոյներով պատմել ամուսիններին իրանց կրած վիրաւորանքների, զրկանքների մասին: Այս կերպով յաջողում են ուշ թէ շուտ եղբայրների միջև պտտակոտմն առաջ բերել և բաժանել միմեանցից:

Վանեցի տանտիկինը ծանրաբեռնուում է տան ներքին գործերով, գիշեր-ցերեկ չարաչար աշխատում է. մանաւանդ ծանր է բազմանդամ ընտանիքների անօգնական տանտիկնոջ վիճակը: Տանտիկինն առաւօտը գիշերանց պէտք է վեր կենայ, թոնիրը վառի, կերակուր պատրաստի, հացի սեղան պատրաստի, տանեցիների ճաշելուց յետոյ ամաննեղէնները լուանայ, մաքրի, իւրաքանչիւրն իր տեղում դասաւորի, ապա բակն ու դռուը, ներսն ու դուրսն աւլի, սրբի, մաքրի, այս բոլորից յետոյ պէտք է ձևի և կարի տան անդամների հագուստեղէնները, երեկոյեան դէմ յաջորդ օրուան համար հորից՝ ջուր հանի, վառելիք պատրաստի, միննոյն ժամանակ ամեն բոպէ իր ուշադրութիւնըն օրօրոցի կամ արգանդի մանուկի վրայ պահի: Տանտիկինն է անում նոյնպէս տան լուացքը. շաբաթը կամ 10 օրը մի անգամ նա պիտի լուանայ տան անդամների ճերմակեղէնները, անկողինը և առնասարակ գործածելի շորեղէնները: Ընդհանրապէս տանտիկիններն են նոյնպէս իրանց տան հացթուխը. ամիսը մի անգամ Վանի գետնափոր թոնիրներում ամբողջ մի օր հաց թրխել, մարմինը կէսից աւելի ծռել թոնրի մէջ կրակի վրայ շատ հեշտ չէ... Սակայն միայն սրանով չի վերջանում վանեցի հայ տանտիկնոջ գործը տան մէջ: Վանում ուտելիքն օրէցօր չի գնում, այլ տարուայ որոշ ժամանակներում ուտելիքների այտուայն տեսակներն ամբողջ տարուայ համար միան-

գամից են գնւում. սակայն ամբողջ մէկ տարի առանց փշացնելու պահելու համար զանազան միջոցներ, ձևեր կան. դա ահագին և պատասխանատու գործ է, որ ծանրանում է տանտիրկնոջ վրայ: Կով կամ ոչխար ունեցող տների տանտիրկինները նոյնպէս պարտաւոր են այս գործն էլ իրանց վրայ առնել, կերակրել նրանց, ջուր տալ, կթել, խնամել, նրանց ախոռը մաքրել, խոտ քաղել այգիներից, կաթից մածոն, մածոնից իւղ հանել և այլն և այլն: Իեռ աւելին կայ. ասել ենք արդէն թէ Վանի տներին կից այգիներ կան. այգետէր տանտիրկինները գարնան սկզբից մինչև ձմրան սկիզբը պարտաւոր են այդեպանի պաշտօն էլ վարել, այսինքն շարունակ հսկել բոյսերի և պտուղների վրայ, ածուները խոտերից մաքրել, բանջարեղէնները մաքրել, հաւաքելու ժամանակ հաւաքել, իրանց տեղերում տեղաւորել: Ընդհանրապէս այս զբաղումն ունին Վանի միջին դասակարգին պատկանող ընտանիքների գրեթէ բոլոր տանտիրկինները: Իսկ երրորդ կամ հասարակ դասի տանտիրկինների վիճակն աւելի դառն է. նրանք վերը յիշուած բոլոր պարտականութիւնները եղածի չափ կատարելուց յետոյ պարտաւոր են տղամարդի պէս էլ աշխատել. ի՞նչ է նրանց աշխատութիւնը—ամբողջ օրը ծալապատիկ նստած՝ ճախարակով բամբակի թել մանել կամ շարունակ ոտի վրայ կանգնած՝ առչկաններով (բոգ) բրդի թել, կամ, որ ամենից աւելի ծանրն է, տղամարդու պէս նստել խոնաւ գետնի վրայ, զոյգ ոտները պարզել մէկ արշինից աւելի խոր գետնափոր հորի մէջ և ջուլհակութիւն անել, կտաւ, դոկ գործել: Այս վերջին զբաղումը վերջին 7—8 տարիներում մըտաւ վանեցի կանանց մէջ. առաջ ոչոքի մաքից չէր անցնում, թէ կինն էլ կարող է այդ բանով զբաղուել, բայց կարիքը սովորեցրեց նրանց այս արհեստը, և այսօր կարելի է համարել Վանում մինչև 100 կին ու աղջիկ, որ ջուլհակութիւն են անում. նոյնքան էլ ճախարակի և բոգի վրայ զբաղողներ: Աշխատում են, որովհետև նեղութիւնն է ստիպում. բայց ի՞նչ է այս աշխատութեան վարձը, բոլորովին չնչին փոխարինութիւն. ջուլհակ կանայք ստանում են ամբողջ տարուայ աշխատութեան փոխարէն 15—20 մէջրդ (24—32 բուբլի), ճախարակի կամ բոգի վրայ աշխատողներն օրական 5—10 փարա (1—2 կոպ.):

Վանեցի տանտիրկինն իր այս չարաչար և ուժասպառ աշխատութեան փոխարէն տան մէջ ինչո՞վ է փոխարինութիւն գտնում, թող ինքը պատասխանի: «Ուրիշ պան չեմ ուզէ Աստըծուց, թող իմ գլխաւոր (ամուսինը) և տղէյներ սաղ մնան, զիկ (ինձ) խաժար խերիք ի»: Արդարև նրա համար այս ցանկութեան լրացումից դատ ուրիշ հաճոյք և մխիթարութիւն

չկայ: Նա գիշեր-ցերեկ փակուած է տան մէջ, զբաղուած ժամերից դուրս եթէ պարապ ժամանակ ունենայ, զանազան զուարճալի միջոցներով անցկացնել չգիտէ: Առհասարակ թէ հասարակ և թէ միւս դասակարգերին պատկանող կանայք զուարթ ժամանակներ ունենալուց զուրկ են: Կիրակի, տօն կամ պարապ օրերը միմեանց այցելելու սովորութիւն զրեթէ չկայ, միայն հարեանները զիւրութիւն ունին շարունակ միմեանց այցելելու, իսկ ծանօթներն ու բարեկամները տարուայ մէջ 10—20 օրուայ չափ միմեանց տուն հիւր են գնում, ահա նրանց միթարուութիւնը:

Կանայք իրաւունք ունին եկեղեցի գնալու, բայց միայն պառաւները կարող են ամեն օր իրանց ուղած ժամանակ զրնալ, իսկ միւսները ոչ ժամանակ ունին և ոչ էլ հասարակաց կարծիքը թոյլ է տալիս: Կանանց ժամ գնալու միակ շրջանը մեծ պահքն է, մանաւանդ մեծ պահքի վերջին երկու շաբաթը: Նորահարսները և հասակաւոր աղջիկներն ամբողջ տարուայ մէջ միայն այս երկու շաբաթուայ ընթացքում 5—6 անգամ եկեղեցի գնալու իրաւունք ունին—այն էլ հաղորդուելու պատճառով, մնացած ժամանակ բամբասանքի են արժանանում: Իզական սեռը եկեղեցում կանգնում է կանանց յատուկ թառամների—վերնատների մէջ, իսկ երբ վերնատները չեն բաւկանանում, եկեղեցում մի մասում նրանց առանձին տեղ են յատկացնում: Եկեղեցին է այն միակ տեղն, ուր վանեցիները կարող են գտնել իրանց բոլոր ծանօթներին, բարեկամներին, ուստի Աստու հետ միջանի ծուր-աղօթքով կամ 1—2 մոմով իրանց հաշիւը փակելուց յետոյ ընկնում, փնտրում են միմեանց, գտնում ու նստում քաղցր-անուշ խօսակցութեան. ժամերգութիւնը վերջանալուց 1—1½ ժամ յետոյ նոր դուրս են գալիս եկեղեցուց:

Ինչպէս եկեղեցի, նոյնպէս հիւր կամ առհասարակ տնից դուրս գնալիս վանեցի տիկինը հազնում է իր ծանր զարդարանքները: Ա., մասամբ նաև բ. դասակարգերին պատկանող ընտանիքների տիկինները կախում են իրանց ականջից գինդեր, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ տաճկական կամ արտասահմանի զանազան զարդոսկիներ տափակ և կլոր ձևով 5—25 բուբուլ արժողութեամբ. վզից կախում են նոյնօրինակ ոսկիների մանեակ, գլուխները ծածկում են եղմամով (նուրբ գունաւոր և ծաղկեկարներով զարդարուած շղարշ, պատրաստում է թիւրքիայի ասիական միջանի քաղաքներում, հատը՝ 16—24 կողէկի արժէքով). հասակաւորները հազնում են կարմիր կամ կապոյտ գոյնի մահուդից դալմա (վերնագրեստ, հո-

գևորականների վերարկուի ձևով, միայն թևերը (նեղ), իսկ հարսերը կամ դեռահաս կանայք մետաքսեղէններից ֆստան—շըրջազգեստ և եւրոպական զանազան ապրանքներից պալ'տո, բագոկներին արծաթէ ապարանջան, մատներին 1—2 հատ ոսկի մատանի, ոտների կալոշով բոտին, որի փողից դուրս երկարանուս է իրանց գործած գուլպան, որի ծաղկեհարները վրայ շաբաթներով աշխատել է վանեցի օրիորդը:

Հասարակ դասակարգին պատկանող կանայք այսքան արդուզարդ 15—50 լիրա—130—430 ըուբլի) չեն կրում, որպէս և՛ մանեակ, մատանի (կրողները պարզ տեսակներն ունեն). ծանրագին հագուստեղէնների փոխարէն աւելի աժաններն են գործածում:

Իսկ տան մէջ թէ աղքատ և թէ հարուստ առհասարակ շատ պարզ են հագնուում, ընդհանրապէս եւրոպական չիթ և դոկ, ձմեռուայ ընթացքում դալմա կամ պալ'տո (մէկ դալման հագնում են մինչև 5—10 տարի, պալ'տոն՝ 2—3 տարի):

Տնից դուրս դալիս պառաւները հագնում են ընդհանրապէս կարմիր գոյնի շապիկ, որ համնում է նրանց ուսերից մինչև ոտները. չափահաս կանայք այս շապիկի վրայ կրում են նաև բատիսկայից պատրաստուած սպիտակ սաւան, որի մէջ փաթաթուում են ոտից մինչև գլուխ և դէմքները ծածկում են. տեղական լեզուով այս սաւանը կոչուում է միմել: Հարսները շապիկի և միմելի փոխարէն կրում են գեաժի նուրբ թելերից հիւսուած չարսաւ, իսկ աղջիկները շիել (եւրոպական ձեռագործ) կամ մէյտակ (մետաքսից գունաւոր թղ): Կանայք տան մէջ եաղմա են գցում իրանց գլխի վրայ, որով հարկաւոր դէպքերում ծածկում են իրանց դէմքը, իսկ աղջիկները գլուխբաց են մնում:

Սխալ է այն գաղափարը, թէ վանեցի կանայք ճաշակ չունին կամ արդուզարդ չեն սիրում: Թէ ճաշակ ունին և թէ արդուզարդ սիրում են, բայց ինչո՞վ և ի՞նչպէս զարդարուեն:

Վանեցի կինը կազմուածքով առողջ է. բաւական վայելչակազմ, գեղեցիկ. և բարձրահասակ է. պէտք է ասել դեռ եւրոպական կորսետները մուտք չեն գտել Վանում. նրա մէջքը զարգացման բնական օրէնքի համաձայն շատ բարակ չէ. դէմքը կլոր, գծագրութիւնը թէև նուրբ, բայց աղաւաղուած (պատճառը քիչ յետոյ կը բացատրուի). աչքերը ընդհանրապէս թուխ կամ շագանակագոյն, բաւական խոշոր ու նշաձև. այտերը մի քիչ թուխ և վրան կարմիր. արտեանունքի թարթիչները բարակ և թեթեաշարժ. յօնքերը բարակ և կորաձև. մազերը թուխ և երկար, որ գլխի ետևի մասում հիւսուում և երկարանում են մէջքի վրայ. ձայնը հնչուն և քաղցր. շարժուածքը ծանր.

Հոկտեմբեր, 1904

քայլերը թէև նոյնպէս ծանր, բայց աւելի առնականին եւ մօտե-  
նում. ոստերը փոքր, եւրոպական պարերին անծանօթ, իսկ  
տեղականին հմուտ:

Ընդհանուր կերպով վանեցի կնոջ կազմուածքը նը-  
կարագրելուց յետոյ պէտք է ասել, որ վանեցի կինը շատ ա-  
ւելի վայելչակազմ, գեղեցիկ, գրաւիչ տեսք ու կազմուածք  
կ'ունենար, եթէ մի քիչ փափուկ պայմանների մէջ ապրե-  
լու բազմաւորութիւնն ունենար, որից, ընդհակառակն, ինչպէս  
տեսանք, բոլորովին զուրկ է. նրա գեղեցկութեան մէջ փափուկ  
նրբութիւնից աւելի մի տեսակ վայրենի գեղ է փայլում. նրա  
դէմքի գծագրութիւնը չափազանց նուրբ և արտայայտիչ է,  
բայց ամեն օր թոնրի շուրջը նստել, ամբողջ մէկ ժամ—այն  
էլ ամեն օր—ծխի ու կրակի մէջ մնան այդ նրբութիւնը  
չի'աղաւաղիլ, նոյնպէս նրա միւս սոսկալի աշխատութիւններն  
ամբողջ նրա կազմուածքի վրայ ազդեցութիւն չեն ունենալ:  
Այո, չարաչար աշխատութիւնը միասում է նրանց գեղեցկու-  
թեանը, միւս կողմից առողջութիւնն էլ խանգարում է, թէև  
չափաւոր աշխատութիւնը նկատուած է որ վանեցի կիների վը-  
րայ աւելի բարերար ազդեցութիւն է անում, քան անգործու-  
թիւնը:

Վանեցի հայուհին քանի դեռ աղջիկ է, գրեթէ անծանօթ  
է հիւանդութեան. մասնաւոր մանկութեան շրջանից ազատուող  
աղջիկները. ինչպէս յետոյ պիտի տեսնենք, մահուան դէպքը  
շատ հազուադիւր է աղջիկների մէջ, իսկ ամուսնանալուց յետոյ՝  
նայած նոր կեանքի պայմաններին՝ ենթարկում է զանազան  
հիւանդութիւնների, որոնք գլխաւորաբար պատահում են յի-  
ութեան և ծննդաբերութեան ժամանակ: Առողջապահական պայ-  
մաններին բոլորովին անծանօթ են. ծանօթ եղողներն էլ պահան-  
ջուած հրահանգներին չեն կարողանում հետևել, իրանց վիճակն  
ու պայմանները չեն ներում: Աշխատութիւնը, հոգսը շատ, սնունդ  
և հոգեկան միութարութիւն պատճառող երեւոյթներն անզոհացու-  
ցիչ: Աշխատել, յոգնել, քրտնել ու պաղել, ցրտի, տաքի դի-  
մանալ, նեղութեան, տառապանքի, սովածութեան, զրկանքի  
տոկալ—ահա վանեցի կնոջ ճակատագիրը. դրանց վրայ աւելացը-  
րէք նաև երբեմն ամուսնու կամ տան միւս անդամների կող-  
մից կրած վիրաւորանքը, զաւակների անակնկալ մահը և ուրիշ  
դժբախտութիւնները: Այդ չէ՞ պատճառը, որ վանեցի կիներն ընդ-  
հանրապէս քանի աղջիկ են, առողջ, ուրախ, զուարթ, աշխոյժ,  
արագաշարժ, ժպտուն, ծիծաղերես են, իսկ ամուսնանալուց  
յետոյ հետզհետէ կորցնում են այդ բոլորը և դրա փոխարէն  
կամաց-կամաց դառնում են մտազբաղ, տխուր, մելամաղձոտ,

քժգոյն, դանդաղաշարժ. ի նկատի ունեցէք նաև, որ վանեցի կանայք բազմածին են. միջին հաշուով ամեն մի մայր 8 անգամ ծնունդ է ունենում. մինչև 15—18 ծնունդ ունեցողներն էլ փոքր թիւ չեն կազմում. այս բոլորի հետ չափազանց վատ է ազդում որդեհէր մայրերին իրանց զաւակների վաղահաս մահը: Որքան որ ծնունդ շատ են ունենում, այնուամենայնիւ զաւակների  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{4}$  կամ նոյնիսկ  $\frac{1}{5}$  մասը հազիւ է ողջ մընում մինչև մայրերի գերեզման մտնելը. այս հանդամանքն էլ անշուշտ աղետալի հետևանք է ունենում որդեպաշտ մայրերի համար:

Իր այս բոլոր անմխիթար պայմանների մէջ վանեցի կիինն այնուամենայնիւ չի կորցնում իր կորովը, տոկունութիւնը, ապրում է մինչև 60—70—80 տարի, միայն թէ վերջին տարիները զրկուում է զանազան դիւրութիւններից (անշուշտ իբրև հետևանք անցեալում ունեցած չարաչար աշխատութեան ու հոգսերին), օր.՝ մէջըը հետզհետէ կորանում է, աչքը տկարանում է, աչկանջը ծանրանում է, անդամալոյծ է դառնում, անդամները սոչչանում են կայր: Քանի շունչ կայ նրա բերանում, երիտասարդութեան, թէ ծերութեան, ուրախութեան, թէ տխրութեան օրերում նա իր ջերմեռանդութիւնը չի կորցնում. ամեն օր առաւօտ և երեկոյ առանձնանում է տան որևէ անկիւն, աղօթում. աղօթելիս առատութեամբ արտասուք է թափում, իր մեղքին թողութիւն, իր գլխաւորին և զաւակներին առողջութիւն և յաջողութիւն, ամբողջ աշխարհին սէր խաղաղութիւն, անճարներին ճար, վտանգուածներին փրկութիւն, հիւանդներին առողջութիւն, հացին աժանութիւն, մահին թանգութիւն է խնդրում և ապա փառք է տալիս Տիրոջ, իր վիճակից զոհութիւն է յայտնում: Ամեն-մի նեղ պարագաներում կանայք սրբերի և Աստուծո օգնութեանն են ապաւինում. «Սրբերի փէշից բոնողը զուրկ չի մնայ», ասում են վանեցի կիները խիստ ջերմեռանդութեամբ. իրանց ամուսինների կամ զաւակների հիւանդութեան ժամանակ անմիջապէս դիմում են զանազան սրբերի օգնութեան, նուէրներ են խոստանում, այդ պատճառով տարուայ մէջ միջանի անգամ հեռու թէ մօտիկ վանքերն ուխտ են գնում: Առանց զգացուելու կարելի չէ դիտել նրանց այն ջերմեռանդութիւնը, որով նրանք Աստուածային զթութիւնն ու կարեկցութիւնն են խնդրում. իսկապէս այն համոզումն, այն հաւատը, որ ունին նրանք, լեռներն անգամ կարող են շարժել իբրանց տեղերից:

Ինչպէս արական, նոյնպէս իգական սեռի մէջ հին և նոր սերունդների միջև բաւական մեծ վիճ է բացւում, իգական սե-

ոի նոր սերունդն օրէցօր իր վիճակը բարուօքելու գաղափարին հետամուտ է լինում, և նկատուում է, որ բաւական յաջողութիւն է ձեռք բերում: Ընտանեկան յարկերում, ընկերական և հասարակական շրջանում բաւական բարձր տեղ է ըննում իգական սեռը, թէև իմաստակների մի խումբ էլ կայ, որ փոխանակ իգական սեռի դատը պաշտպանելու՝ քացիով յետ է տալիս, բայց իմաստակների կողքին կայ աւելի մեծ մի խումբ, որ իր լուրջ, խելացի, հեռանկատ գործունէութեամբ համակրելի դիրք է գրաւել հասարակութեան մէջ: Ամբողջ վանեցիկները համակրանքով են նայում դէպի իգական սեռի առաջադիմութիւնը և որևէ ջանք չեն խնայում նրանց դիրքը արժանաւոր բարձրութեան հասցնելու, միայն թէ տեղական հանգամանքները, արևելեան բարքերն արգելք են լինում:..

## XXI

Կրթական վիճակը. վանեցու վերաբերումը դէպի կրթական գործը. վանեցու և բիթլիզցու հայեացքը կրթութեան մասին. կրթական գործի սկիզբը Վանում. վանեցի պանդուխտների կրթասիրական ջանքեր Կ. Պոլսում. ծխական վարժարանների բացումը և Փութկու վանքը. Վարազի դպրոցը. ոգևորութիւն կրթական գործի մէջ. դպրոցները 70-ական թուականի վերջերում և 80-ականի ըսկզբներում. ծխական դպրոցների և անհատական ու օտար վարժարանների նիւթական, կրթական-բարոյական վիճակը կիսադարեան շրջանում. ներկայ վիճակը. դպրոցները 1902—1903 ու. տարուայ տեղեկագիրը. Կենտրոնական վարժարանի գաղափարը. բացումը Գ. Սերբերենիկովի կտակը. շէնքը. դպրոցի բարոյական վիճակը. ծրագիրը. վիճակը. 1902—1903 ու. տարուայ տեղեկագիրը և տեղեկութիւններ ներկայի մասին. Երամեան վարժարանը. անցեալը. դիրքը անցեալում. ներկայ վիճակը. 25-ամեայ յորելեանը. 1902—1903 ու. տարուայ տեղեկագիրը. 4. Երամեան:

Վանեցիները բառի բուն նշանակութեամբ կրթասէր ժողովուրդ կարող են համարուել: Այդ սէրը բղխում է երկու գլխաւոր պատճառից: Որքան որ Վանը ընկած է չափազանց խուլ ու մութ մի անկիւնում, որով քաղաքակիրթ երկրների հետ անմիջական շփումներ կամ արագ յարաբերութիւններ անելու դիւրութիւնից զուրկ է, այնքան էլ վանեցիները այս վիճակը ստիպում է նրանց դառնալ չափազանց հետաքրքիր ժողովուրդ, և այդ հանգամանքի շնորհիւ նրանք մինչև անգամ լրագրերի, հանդէսների և դրքերի միջոցով հետեւում են եւրոպական և ամերիկական ժողովուրդների քաղաքակրթութեան պատմութեան անցեալին և ներկային: Պոլսական բազմարովանդակ օրաթերթերն օրէցօր առատ նիւթ են մատակարարում եւրոպական կեանքից վանեցիներին: Վանեցի

ընթերցողը թէև չի տեսնում, բայց նկարագրութիւններ կարգալով՝ պատկերացնում է իր առաջ լուսաւորուած երկրներում միմեանց յաջորդող և գերազանցող գիւտեր, հնարներ, սքանչելիքներ, հրաշալիքներ: Վանեցին լսելով այդ բոլորը՝ նախանձում է նրանց յաջողութեանն ու կեանքին և փորձում է հետևել նրանց, օգտուել նրանց ցոյց տուած միջոցներից և դիւրութիւններից. վանեցին այդպէս է վարուում, ինչպէս ասացինք, երկու պատճառներով. նախ՝ իր տնտեսական վիճակը բարուղքելու ակնկալութեամբ, և ապա՝ իր իմացական կարողութիւնը զարգացնելու և մշակելու նպատակով: Գուցէ առաջին պատճառն ամբողջ մարդկութեան համար ընդհանուր համարուի, որովհետև ամեն մարդ փափագ ունի նիւթական բարուղք վիճակի տէր դառնալու, բայց երկրորդը՝ կարելի է ասել՝ թիւրքիւայում շատ քիչ գաւառացի ժողովուրդների համար կարևորութիւն ունի: Վանեցին մեծ ճիգ է անում հասարակութեան մէջ երևալու իբրև զարգացած, ուսումնագէտ, կըթասէր, գրասէր անձն. վանեցի ծնողը պատիւ է համարում իբան, որ իր գաւակը գրել-կարդալ գիտէ, լրագիր կարող է կարդալ, հետաքրքիր վէպերի, պատմութիւնների ընթերցման սէր ունի, դպրոցական, կըթական խնդիրներում մտնում է, ասում է, խօսում է, վիճում է, ձայն ունի կայն: Վանեցիների այս ձգտումը վստահաբար կարող ենք ասել որ չունին ոչ Բիթլիզի, ոչ Կարնի և ոչ էլ Տրապիզոնի և նման քաղաքների ժողովուրդները: Անցեալները՝ նորահաստատ Հայկազեան Կենտրոնական վարժարանի հիմնարկութեան առիթով տիրող ոգևորութեան մէջ պատահմամբ խօսքի բռնուեցի մի անժանօթ վանեցու հետ և ուզեցի շօշափել դպրոցական գործի մասին նրա ունեցած գաղափարները և հայացքները: — «Բարեկամ, ասացի, ինչո՞ւմն է կայանում ձեր այդքան ուրախութեան շարժառիթը, չէ՞ որ դուք բաւականաչափ դըպրոցներ ունէք, ի՞նչ էք սպասում այս նոր դպրոցից, չէ՞ որ եթէ Կենտրոնականի փոխարէն համալսարան էլ ունենաք, դարձեալ ծխական դպրոցի արժէք պիտի ունենայ, քանի որ Վանի ալըբեղու հանգամանքներն այնքան պարզ և նահապետական են, որ միջնակարգ և բարձրագոյն կըթութեան առանձին պահանջ չկայ»: — «Սխալուում էք, ընդմիջեց խօսակիցս, մենք Կենտրոնականի պէս միջնակարգ դպրոցի անհրաժեշտ պէտք ունինք. 7—8 տարուայ ընթացք ունեցող մեր անկերպարան ծխական, վարժարանները տալիս են մեզ թերուս իմաստակներ, որոնք ոչ ուղիղ գրել-կարդալ գիտեն և ոչ էլ որևէ ուրիշ առաւելութիւն ունեն. իսկ այս նոր դպրոցն իբրև ծխական դպրոցների շարունակու-

Թիւն պիտի լրացնէ շատ թէ քիչ մեր զաւակների կրթութեան թերին. ճշմարիտ է, որ Կենտրոնական դպրոցը չի կարող արհեստագիտական, առևտրական, գիւղատնտեսական կամ որևէ մասնագիտական դպրոցի ծրագիր ունենալ. ճշմարիտ է, որ Վանի վաճառականութիւնն իր ներկայ նահապետական պայմանների մէջ պէտք չունի ատտեստատներով, դիպլոմներով վկայուած վաճառականների, մեր երկրագործական, գիւղատնտեսական գործերի և բոլոր միւս արհեստների մէջ պէտք չկայ վերկայուած մասնագէտների, քանի որ մեր ունեցած ոյժերն արդէն պահանջուածից աւելի են, բայց և այնպէս մեր հասարակութեան զարգացման մակերևոյթը շատ ցածր է, կեանքի մասին գաղափար չունինք, մեր առօրեայ նիստուկացի մէջ թերութիւններ շատ կան, մեր ընտանեկան յարկերում կատարեալ տգիտութիւն է թագաւորում, առողջապահական պայմաններին բոլորովին անծանօթ ենք, այդ պատճառով էլ աներևակայելի կորուստներ ենք տալիս շարունակ. մեր տգիտութեամբ մենք անծանօթ ենք պետական օրէնսգիտութեան, այդ պատճառով մենք մեզ յաճախ կորստի ենք մատնում. մեր բարքերը շատ կոպիտ, դուրսիկ են. կրթութիւնը կարող է մեղմացնել այդ բարքութիւնները. քաղաքավարութեան մասին գաղափար չունինք՝ մի օտարագրի և օտարերկրացի զբօսաշրջիկ ենք տեսնում մեր քաղաքում, վայրենու պէս նրան շրջապատում ենք, մեր ոռակական վարմունքով ստիպում ենք նրան յոռի գաղափար կազմել մեր մասին. մէկ խօսքով՝ մենք անկիրթ՝ ժողովուրդ ենք, վայրենի ենք, տգէտ ենք, դպրոցներ պէտք են մեզ — ամենից առաջ դաստիարակուելու համար. ճշմարիտ դաստիարակութիւն պէտք է մեզ, որ մեր հոգին ազնուացնի, որպէսզի ամենից առաջ ճանաչուենք իբրև ազնիւ հասարակութիւն. կրթութիւն պէտք է մեզ, որպէսզի մեր կոյր, խաւար միտքը բացուի, լուսաւորուի, և մենք կարողանանք ցոյց տալ ուրիշներին մեր քիմացական կարողութիւնները. վերջապէս ժամանակի պահանջն է այդ, մեր բարոյական և տնտեսական առաջադիմութիւնը կախուած է դպրոցներից. ամբողջ քաղաքակիրթ ազգերն ընդունել են այդ սկզբունքը, հետևել են նրա իրագործման և արդիւնքը գոհունակութեամբ վայելում են, մենք հայերս էլ ընդունել ենք այդ սկզբունքը, ուրեմն պէտք է ջանանք նաև գործադրել, որովհետև միայն զգալը և ասելը բաւական չէ, այլ պէտք է անել. վայրենի ազգերն էլ այսօր այդ սկզբունքն ըսկսել են պաշտել, մեր հարևան քիւրդերի մէջն անգամ այդ համոզումն սկսել է մշակուել: Կարծեմ խօսակցիս յայտնած մտքերը, որ համառօտելով այստեղ դրի, բաւական բնո-

րոշ են. նոյնքան բնորոշ է և՛ բիթլիզցի մի նշանաւոր վաճառականի հայեացքն այս հարցի նկատմամբ. «Իպրոց ասելով ես հասկանում են—ասում է յիշեալ վաճառականը —մի արհեստանոց, ուր աշակերտը պէտք է սովորի միայն գիր ու հաշիւ, ինչպէս կօշկակարը, որ արհեստանոցում սովորում է կօշիկ կարել: Կրթուել, դաստիարակուել, քաղաքավարութիւն սովորել, դրանք բոլորն էլ աւելորդ բաներ են, քաղաքավարութիւնից աւելի անհրաժեշտ է մեզ դրամը, եթէ այդ ունեցար արդէն, ոչ մի պակասութիւն չունիս, իսկ դրամ շահելու համար գիր ու հաշիւ գիտենալ շատ լաւ է»:

Այժմ համեմատեցէք վանեցու և բիթլիզցու հայեացքները. իսկ մենք իրողութեան վրայ նայելով տեսնում ենք, որ իրօք Բիթլիզում կրթական գործը շատ աննախանձելի վիճակի մէջ է գտնուում. բիթլիզցիներն աչքի են ընկնում իրանց տնտեսական վիճակի գերազանցութեամբ (թէև անցած արհաւիրքի ժամանակ շատ կորցրին), կոշտ ու կոպիտ են, հրէական յատկութիւններով: Գալով Վանին՝ տեսնում ենք, որ Վանը իր կրթական վիճակով թէև շատ բարձր է Բիթլիզից, բայց այդ դպրոցները չեն կարողացել վանեցու տնտեսական վիճակը եթէ ոչ գերազանցել, գէթ հաւասարեցնել բիթլիզցու վիճակին. միակողմից տեսնում ենք, որ վանեցիները բիթլիզցիներից անհամեմատ աւելի ճաշակ ունին իրանց ուտելիքի, հագնելիքի, նիստուկացի մէջ և նրանցից աւելի քաղաքավարի և ազնիւ են:

Այո, վանեցիները կրթասէր ժողովուրդ են, բայց չնայած դրանց այդ յատկութեան՝ կրթական գործը չափազանց տխուր և անմխիթար վիճակի մէջ է գտնուում: Աւելի քան կէս դար է, որ սկիզբ է դրուած Վանում հասարակական կրթութեան գործին, բայց այս կիսադարեան շրջանում դպրոցների առաջադիմութիւնը կրիայի քայլերին է հաւասարուում. թէ ինչ է պատճառը, որ հակառակ վանեցիների ջանքին կրթական գործը կաղէկաղ է առաջ գնում, մենք մի քիչ յետոյ կը բացատրենք, այժմ երկու խօսքով պատմենք Վանի կրթական գործի սկզբնաւորութիւնը:

Մինչև 1840-ական թուականները Վանում հասարակաց կրթութիւն կամ դպրոցներ գոյութիւն չունէին: Իրանց զաւակներին ուսման տալու փափագ ունեցող այսուայն ծնողներն ուղարկում էին իրանց տղաներին թաղի մէջ գտնուող «հայագէտ» ուստայի, տիրացուի կամ քահանայի մօտ այդ ժամանակում կարևոր համարուած գիտութիւնները սովորելու, որոնք էին ճարտասանութիւն, քերականութիւն, ժամերգութեան վերաբերեալ ընթերցանութիւն և երգեցողութիւն, սաղմոս, նարեկ,

աւետարան կայն: Ծնողների ամենամեծ փափազն էր տեսնել իրանց զաւակներին եկեղեցում շապիկ հագած փոխ ասելիս, գիրք կարդալիս, շարական երգելիս, պատարագին դպրութիւն անելիս և նարեկ ու սաղմոս «քաջ և վարժ» կարդալիս:

Այս ժամանակները վանեցիկներն արդէն ծանօթացել էին Պոլսի ճանապարհին, գնում էին այնտեղ փող շահելու: 1840-ական թուականին միմեանցից ետ ու առաջ Պոլիսն են գրնում վանեցի Ագրիպպաս Տպաղեան, նրանց դրացի տիրացու Մկրտիչ Սրիմեան, Լիմ անապատի միաբան Յակոբ վարդապետ Թոֆուպեան, երիտասարդ Շարան Շարանեան կայն: Սրանցից առաջինն արդէն իբրև կօշկակար կայսերական իփիթխանայում գործ էր սկսած, երբ Պոլիս է հասնում չքաւորութիւնից ստիպուած տիրացու Մկրտիչը, որը Վանում կտաւազործների մօտ սովորել էր գրել-կարգալ, իսկ Աթարուց թաղի քահանայ տ. Պետրոս Արտամետցեանի մօտ էլ շաբաթական մէկ դասով աւելի կատարելագործել էր իր ուսումը: Նա տեսնելով՝ որ իրանց ընտանիքն օրէցօր չքաւորութեան է մատնուում, թողնում է Վանը և հեռանում Պոլիս իր եղբօրն օգնելու նպատակով: 1846 թուին Պոլիս է հասնում Յակոբ վրդ. իբրև Լիմ անապատի ժողովարար և ներկայանում է Մատթէոս պատրիարքին. այս հանգամանքն առիթ է տալիս այս միքանի վանեցիկներին Պոլսում գոյութիւն ունեցող զբարոցներն օրինակ առնելով՝ խորհել իրանց հայրենիքում զբարոցներ բանալու. այդ առիթով շարունակ խորհրդակցութիւններ են անում և պատրիարքին են դիմում: Պատրիարքի կարգադրութեամբ Սրիմեան Մկրտիչը մտնում է Սասզիւղի Ներսէսեան վարժարանն իբրև օգնական վարժուհի պառաւ Սրբուհուն, որպէսզի ուսուցչական արհեստին ծանօթանայ և Վան դառնայ ուսուցչութիւն անելու. մէկ կողմից Սրիմեանն այս ասպարէզում իր պարկեշտութեամբ գրաւում է հետզհետէ վարժարանի խնամակալների սէրն ու համակրանքը և օրէցօր զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս, միւս կողմից Ագրիպպաս, Շարան և Յակոբ վարդապետը պատրիարքարանի շէմքը մաշում են և պատրիարքից խնդրում, որ օգնի իրանց Վանում շուտով դպրոցներ բանալու: Ափսոսում են, որ Սրիմեանին իր գործից հանեն. այդ պատճառով էլ յաջորդ 1847 թուին յիշեալ վանեցիկների ծանօթ հայրենակից տիրացու Մանուէլը Վան դառնալու ցանկութիւն յայտնելիս նշանակուում է պատրիարքարանի կողմից իբրև ուսուցիչ Վանում բացուելիք առաջնորդարանական դպրոցին, և այդ մասին գրւում է Վանի առաջնորդ Գաբրիէլ վարդ. Շիրօեանին. մի քիչ յետոյ

Շարանը և Յակոբ վ. հասնում են և գործի գլուխն անցնում, քաղաքի երևելիներից մի հոգաբարձական մարմին է ընտրուում, և վանում բացւում են 5 ուսումնարաններ:

Քաղաքամիջուկ՝ Յիսուսեան վարժարան, ուսուցիչը Մանուէլ Արտամետցեան (այժմ Տ. Դիոնեսիոս քահանայ), աշակերտներէ թիւը ա. տարում 100:

Արարուց թաղում—Ս. Մատթէոսեան վարժարան, ուսուցիչը Պետրոս քահ. Արտամետցեան (վախճ.), աշակերտների թիւը ա. տարում 250:

Նորաշէն թաղում—Ս. Օհաննէս վարժարան, ուսուցիչն Օհաննէս Գորոզ (մեռած), աշակերտների թիւը ա. տարում 180:

Յանկոյսների թաղում—Ս. Մարկոսեան վարժարան, ուսուցիչն Աւետիս վարժապետ (յետոյ կոստանդին, վախճ.), աշակերտների թիւը ա. տարում 200:

Ս. Յակոբի թաղում—Ս. Ղուկասեան վարժարան, ուսուցիչը Մարտիրոս Արտամետցեան (յետոյ Տ. Մեսրոպ քահանայ ապա վարդապետ)\*):

Իսկ այս դպրոցներին ընդհանուր տեսուչ է նշանակուում Յակոբ վ. Թոփուզ:

Ահա այդ օրուանից սկսած հիմք դրուեց Վանի ներկայ 5 ծխական կամ թաղային դպրոցներին, որոնց վրայ յետոյ աւելացաւ նաև Հայկավանուց Հայկեան ծխ. վարժարանը:

Ծխական այս դպրոցները բացուեցին վերը յիշուած վանեցիների ջանքով և եռանդով, բայց նրանք խնդրի բարոյական մասի մէջ կարող էին աշխատել, իսկ նիւթականն իհարկէ նրանց ձեռքով չէր կարող հայթայթուել: Եկեղեցիները երբէք չէին կարող հաշտուել այն մտքի հետ, թէ իրանք իրանց գանձարանից պիտի հոգան իրանց ծոցում բացուած դպրոցների նիւթական պէտքերը, իսկ ծնողները թոշակ տալու մասին գողափար չունէին, մնում էր գտնել մի արտակարգ աղբիւր, և այդ աղբիւրը լինում է Մոկաց Փուլիլու ս. Գէորգի վանքը: Այս ժամանակներն այս վանքը հայերի չափ ունիտի էին գալիս քիւրդերը, որոնք ուղեցին գրաւել վանքը և իրանց սեփականացնել: այս առիթով, դատ է բացւում հայերի և քիւրդերի մէջ, և դիւանագէտ Շարանը մտնում է դատի մէջ, այդ ժամանակուայ Վանի Մահմէդ փաշային բացատրում է եղելութիւնը, դատը տանում է, որով համակրելի դառնալով մոկացիներին, Աղթամարի վանականներին և ամբողջ թեմականներին՝ յաջողում է համոզել նրանց, և այդ վանքի տարեկան 15,000 ղուրուշի

\*) Մի հայ քահանայի յիշատակարանից:

(1200 ր.) չափ հասոյթը յատկացնել Վանի նորարաց վարժարաններին:

Ահա այս կերպով սպահովուում են ծխական վարժարանները, մինչև որ միքանի տարի յետոյ Խրիմեանը Վանում ըսկսում է բողոքել այդ կարգադրութեան դէմ և պահանջում է, որ իւրաքանչիւր եկեղեցի ինքը հոգայ իր դպրոցի ծախքը, իսկ Փոլսի վանքի հասոյթը յատկացնուի մոկացի գիւղացիներին կրթութեան. մոկացիները Խրիմեանի ձայնից քաջալերուած մերժում են այլևս փող տալ, բոլոր դպրոցները փակուելու սպառնալիքի են ենթարկուում, և ահա Վանի ազգեցիկ անձընաւորութիւններից մէկի—Հայրապետ—ըէյ Սապոնճեանի ջանքերով կազմուում է Արժրունեաց ընկերութիւնը, և ապա կամացկամաց դպրոցների հոգսը դրւում է եկեղեցիներին վրայ. այսօր արդէն այդ բոլոր դպրոցները կառավարուում են եկեղեցիներին ծախքերով և մի աննշան մասով էլ աշակերտների վճարած թոշակով:

Սկզբում թաղային վարժարանները կառավարուում էին իւրաքանչիւր թաղում կազմուած խնամակալներով կամ հոգաբարձուներով, իսկ սահմանադրութեան մուտքից յետոյ թաղական խորհուրդներով:

Մկրտիչ Խրիմեանը Պոլսում իր հայրենակիցներին հետ Վանի կրթական գործի հաստատութեան խորհրդի մէջ իր ունեցած բաժնով չբաւականանալով, երբ Պոլսի դպրոցները ուսումնասիրեց, պոլսեցի միքանի հարուստների համակրանքն ու վստահութիւնը գրաւեց և վերջապէս երբ երկրորդ անգամ Պոլսից դառնալուց յետոյ վարդապետ դարձաւ և երրորդ վերադարձի ժամանակ Վարազայ վանահայրութիւնը ձեռք բերեց, իր բացած ժառանգաւորաց (որ յետոյ երկրագործականի փոխուեց) դպրոցով, ինչպէս նաև իր քարոզչական պաշտօնով Վանի ծխական դպրոցներին մղում տուեց դէպի առաջադիմութիւն. Վարազայ ժառանգաւորաց դպրոցը կարող էր տիպար դպրոց համարուել Վանի խայիֆայական ծխական վարժարանների համար: Խրիմեանը Պոլսի դպրոցների մէջ տիրող դրութիւնը, մեթոդը փոխադրել էր Վարազայ: Դպրոցական շէնքը եղածներից բոլորովին նոր և տարբեր ճաշակով, ուսուցիչները կարողութեան տէր, զարգացած, նոյնիսկ մասնագէտ, դասաւանդութեան մեթոդը ժամանակակից եւրոպական մանկավարժութեան հետևողութեամբ, աշակերտների նիստուկացը, կեանքը, սնունդը, հագնելիքը կանոնաւոր և օրինակելի—ահա այս բոլորը վանեցիկների համար նորութիւններ էին:

1870 թուին պատրիարք Խրիմեանը ձեռնարկում է Վանի

մէջ իգական սեռի կրթութեան գործի սկզբնաւորութեան. նա իր մօտն է կանչում շարունակ Պոլսում գտնուող միջանի վանեցի վաճառականների (Բաբիկեան, Գափամաշեան), որոնք նրա յորդորներից դրդուած՝ կազմում են մի ընկերութիւն ս. Սանդուխտ կոյսի անուան նուիրուած, և 1870-ի օգոստոսի 1-ին բացւում է Վանում աղջիկների համար Սանդխտեան վարժարանը. կարճ ժամանակից յետոյ Խրիմեանի յորդորով Մկրտիչ Սանասարեանը 2000 բուբլի է նուիրում Սանդխտեան վարժարանի համար շէնք կառուցանելու, ապա միևնոյն բարեգործի կողմից կտակւում է 10,000 բուբլի անձեռնմխելի գումար, որի տոկոսը գործածւում է դպրոցի վրայ:

1878 թուականի շուրջը մինչև 80-ական թուականի կէսերը Վանի կրթական գործում նոր ոգևորութիւն է մտնում. դրսից նոր-նոր գաղափարներ են մուտք գործում Վան, այստեղ-այնտեղ կազմւում են զանազան կրթասիրական նպատակ ունեցող ընկերութիւններ:

1878 թուին կազմւում է Խնամատալ ընկերութիւնը, որի նպատակն է լինում որբ տղաներ հաւաքել, կրթել նրանց իբրև ուսուցիչ, կղեր. այդ նպատակով սկզբում 12-ի չափ որբեր ս. Յակոբի վարժարանն են երթեկում և տարի ու կէս յետոյ սովի բուռն ժամանակ քաղաքի մերձակայ վանքում բացուած որբանոցի մէջ պատսպարւում են 22 հոգու չափ, մինչև որ 1872-ի վերջը ընկերութիւնը լուծւում է, և գործը մնում է ընկերութեան հիմնադիրներից մէկի աշաղուրկ Համբարձում Երամեանի վրայ, որ մինչև այդ ժամանակ վարում էր ընկերութեան ատենապետի և դպրոցի աւագ ուսուցչի պաշտօնը: Ընկերութեան լուծուելուց յետոյ Երամեանը որբանոցի կառավարութեան գործն առնում է իր վրայ, վանքից փոխադրում է Այգեստան և իբրև իրան սեփական անհատական վարժարան պահում, թոշակաւորներ ընդունելով՝ հետզհետէ աշակերտների թիւը շատացնում է և դպրոցին կանոնաւոր կերպարանք տալու ջանք ու եռանդ ունենալով՝ օրէցօր բարեկարգում է և գոյութիւնը բերում հասցնում է մինչև այսօր:

1879-ին Պոլսի Արարատեան (յետոյ Միացեալ ընկերութեան փոխուեց) ընկերութիւնը Վանի համար օրինաւոր ուսուցիչներ պատրաստելու նպատակով հիմնում է Վանում վարժապետանոց, ուր գործն սկզբում շուտ սկզբնաւորով ին է ունենում և կարճ ժամանակում ժողովրդի վստահութեանն է արժանանում, սակայն հազիւ 2 տարի պահպանում է իր գոյութիւնը, որովհետև ընկերութիւնը չկարողանալով պահել՝ որոշում է փակել: Դպրոցի տեսուչ Մկրտիչ Փորթուկալեանը՝

դէսուղէն ընկնելուց յետոյ երբ տեսնում է, որ անկարելի է վարժապետանոցը վերաբանալ, գործի ընդհանուր պատասխանատուութիւնը իր վրայ է առնում, անուընդ փոխում, Կենտրոնական է դնում. այս դպրոցն էլ պահում է իր գոյութիւնը մինչև 1885 թիւը, Փորթուկալեանի Վանից հեռանալուց յետոյ կառավարութեան հրամանով փակում է:

70-ական թուականներին բացուեց նոյնպէս Վանի Հայկազեան վարժարանը, որ 7 տարի գոյութիւն ունենալուց յետոյ գոցուեց, իսկ վերաբացումը տեղի ունեցաւ 1902-ին: 80-ական թուականի կէսերին բացուեցին Բարաղամեանի, Յոնանեանի, Տ. Մկրտչեանի անհատական վարժարանները, որոնցից առաջինը ընդհատուով 10 տարուայ չափ գոյութիւն ունեցաւ, իսկ Յոնանեանինը և Տ. Մկրտչեանինն աւելի կարճ:

Ութսունական թուերին Քաղաքամիջուս բացուեց աղջիկների համար Շուշանեան ծխական վարժարանը, իսկ Այդեստանի Յանկոյաներ թաղում Խրիմեանների տան մէջ Գայիանեան վարժարանը. այս դպրոցն իր նիւթական և ուսումնական համեստ վիճակով օրէցօր աւելի և աւելի համակրելի դիրք էր ստեղծում իր համար հասարակութեան մէջ, սակայն 1896-ի անակնկալ աղետը չինայեց այս դպրոցն էլ, շէնքն էլ այրուեց, աւեր եղաւ և փակուեց:

1892-ին բացուեց մի ուրիշ անհատական վարժարան, որ հազիւ 4 տարի գոյութիւն ունեցաւ:

Ահա կէս դարում Վանն իր ծոցում կառուցել է այսքան դպրոցներ, որոնց մի մասը մինչև այսօր պահպանում է իր գոյութիւնը, իսկ մի մասը սունկի նման երևալով՝ աւելի կամ պակաս կարճ կեանքից յետոյ անհետացել է:

Փակուած դրոցներից ափսոսալու արժանի է համարուել Վարժապետանոց-Կենտրոնականը, որ իր յեղեղուկ վիճակով հանդերձ կարճ ժամանակում արդիւնաւոր պտուղներ է տուել Վանի հասարակութեանն. այդ դպրոցի ընթացաւարտներն. ընդհանուր կերպով հասարակութեան մէջ հռչակ հանեցին իրանց դարգացումով, իւրացրած գաղափարների առողջութեամբ: Ափսոսալու արժանի է նոյնպէս Յանկոյաների Գայիանեան իգական վարժարանը, որը թէև իր գոյութեան ընթացքում իր խաղաղարուելուց մէկ տարի առաջ—1895 թուին հազիւ յաջողեց 3 ընթացաւարտներ տալ (9-ամեայ դասընթացով), բայց իր կիսաւարտ աշակերտուհիներին անգամ կարողացաւ ննչնչել սէր դէպի դաստիարակութիւնը. այդ դպրոցն իր կարողութեան չափով ժողովրդին բացատրեց իգական սեռի կրթութեան կարևորութիւնը:

1903 թուի սեպտեմբերին Յանկոյաներ եկեղեցու հաշուով բացուեց նոյն թաղի մէջ աղջկանց համար վարժարան, որը թէև ներկայումս դեռ անկերպարան վիճակի մէջ է գտնուում, բայց չպէտք է կասկածել, որ հետզհետէ կանոնաւորելու ջանքեր չեն խնայուելու:

1903 թուին Վանում գոյութիւն ունէին հետեւեալ դպրոցները.

Քաղաքամիջում արական սեռի համար Յիսուսեան վարժարանն, իսկ իգական սեռի համար՝ Շուշանեան վարժարանը:

Այգեստանում՝ Արարուց թաղում Ս. Թարգմանչաց երկսեռ վարժարանը. այս դպրոցը նախկին Ս. Մատթէոսեան վարժարանն է, որ աղջկանց բաժինն էլ ունենալուց և շէնքը վերանորոգուելուց (1889) յետոյ ստացել է այս անունը: Նորաշէնու Ս. Յովնանիսեան վարժարանը, Յանկոյաների Ս. Մարկոսեան, Ս. Յակոբի, Ս. Ղուկասեան, Հայկավանքի միդասեան վարժարանը, Սանդխտեան վարժարանը, Երամիանի անհատական վարժարանը, կաթողիկէ և բողոքական միասիօնաբուծիւնների արական և իգական վարժարաններն և Յանկոյաների աղջկանց նորաբաց վարժարանը:

Վերը խոստացանք ծխական կամ թաղային դպրոցների ցոյց տուած արդիւնքի մասին մեր խօսքը շարունակել, այժմ դառնանք այդ խնդրին:

Ծխական վարժարաններն սկզբից մինչև այժմ միշտ էլ ենթակայ են եղել բաղդի ելևէջներին, երբեմն ունեցել են շատ թէ քիչ խաղաղ և բարեկարգ վիճակ, երբեմն խառնաշփոթ, անկարգ, անկանոն քաօսի կերպարանք են ստացել, և այս փոփոխութիւնները պարբերաբար և արագաբար յաջորդել են միմեանց բոլոր ծխական դպրոցներում: Մինչև այժմ այդ դպրոցները որոշ կանոնադրութիւն և ուսումնական ծրագիր չեն ունեցել, ունեցած ժամանակն էլ գործադրել չեն կարողացել: Շատ անգամ է պատահել, որ այս կամ այն դպրոցը տարուայ ընթացքում օրերով, շաբաթներով և ամիսներով փակ է մնացել թաղական խորհրդի հրատարուելովը կամ նոյն խորհրդի անդամների միջև ծագած վէճերի պատճառով, ուսուցիչներից միքանի հոգու կամ ամբողջ ուսուցչական խմբի հեռանալովը կամ հեռացուելովը և այլն:

Աւելի քան 50 տարուայ ընթացքում Վանի 5-6 ծխական դպրոցներից և ոչ մէկը ոչ մի ժամանակ չի ունեցել այնպիսի հոգաբարձութիւն կամ թաղական խորհուրդ, որի նպատակը լինէր անկեղծ կերպով ջանք թափել իրանց խնամքին յանձնուած դպրոցը պահանջուած կանոնադրութեան սահմանի

մէջ պահելու: Ընդհակառակն՝ վէճերն ու կռիւնները շարունակ անպակաս են եղել խորհրդարաններից, հողաբարձութեան կամ թաղ. խորհրդի անդամի անուն կրողները լոկ պատուի և փառքի տենչով են մտել գործի մէջ, միշտ աշխատել են հասարակութեան և դպրոցի շահը զոհել իրանց անձնական քմահաճոյքներին. այո, եղել են և՛ սակաւաթիւ ուղղամիտ, իրանց պաշտօնին պատիւ բերող, զործունեայ անձնաւորութիւններ էլ, որոնք սակայն իրանց ընթացքով մեծամասնութիւն կազմող իրանց պաշտօնակիցների մէջ չկարողանալով իրանց ձայնը լսեցնել՝ կամ՝ կոտել, յաղթուել, ընկել են և կամ սուսուփուս գործից ձեռնթափ լինելով՝ ասպարիղից քաշուել են և կամ համակերպուել են նրանց:

Դժբախտաբար զեղծ պաշտօնեաները միշտ էլ մեծամասնութիւն են կազմել թէ առաջնորդարանի կողմից և թէ ժողովրդի ձայնով (սահմանադրապէս) ընտրուած մարմինների մէջ: 90-ական թուականներին, երբ թաղ. խորհուրդները միջանի անգամ սահմանադրապէս ընտրուեցին, ժողովուրդը շատ թէ քիչ ձայն ունէր, երբեմն էլ յաջողում էր իր ձայնը լսեցնել, իր ուղած անձնաւորութիւններին ընտրել, հետաքրքրուել դպրոցի վիճակով. բայց այժմ այդ էլ չկայ, ժողովրդի ձայնը բոլորովին խեղդուած է, թաղ. խորհուրդները բոլորովին սանձարձակ իրանց ուղածի պէս են վարում. շատ անգամ է պատահել, որ ժողովրդի կողմից նկատողութիւններ են եղել դպրոցական այս կամ այն խնդիրների մասին, բայց առանց հետեանքի են մնացել, որով ժողովուրդը զգուել է և իր ձայնը կտրել:

Թաղ. խորհրդի անդամների գործած կամայականութիւններն, այո, մեծամեծ վնասներ են հասցնում դպրոցներին, բայց կան նաև ուրիշ և աւելի վորաւոր պատճառներ, որոնք արգելք են լինում Վանի դպրոցների բարեկարգութեան:

Ամենագորաւոր պատճառներից մէկը և առաջինն է դրպրոցների նիւթական աղքատութիւնը: Չկայ թիւերքիայում ուրիշ մէկ քաղաք, ուր հայերի դպրոցներն այնքան աղքատիկ բիւջէ ունենան, ինչպէս Վանի դպրոցներն են. բայց խնդիրը նրանումն է, որ այդ դպրոցներն իրանց աղքատութեամբ հանդերձ ընդարձակ ծրագրով են ընթանում: Փոխանակ 1000 ըուբլիով 1000 ըուբլիանոց գործ վարելու՝ 10,000-ի են ձեռք զարկում: Անտանիլի էր դպրոցների վիճակը մինչև նախանցած 1902 թիւը, երբ դեռ գոյութիւն չունէր Հայկազեան-Կենտրոնական վարժարանը. մինչև այդ դպրոցի հաստատուելը վերջին 10—15 տարիներում Վանի ծխական դպրոցները պարտաւորուած էին 9—10 տարուայ դասընթացք ունենալ, բայց տեսէք թէ ինչպէս:

Վերցնենք 1-2 դպրոցների պաշտօնական տեղեկագիրներինց մեր խնդրին վերաբերեալ միջանի թուանշանները:

1901/902 ուս. տարում Վանի Յանկոյաներ թաղի ծխական վարժարանն ունէր 200 աշակերտ, 8 դասարան, 8 այցելու և մնայուն ուսուցիչ (մեծամասնութիւնն այցելու), շաբաթական 140 ժամ դաս, դպրոցի ամսական ամբողջ ծախսն էր 847 ղուրուշ (67 ռուբ. 76 կոպ.):

Նոյն 1901/902 ուս. տարում Վանի Արարուց թաղի երկսեռ վարժարանի տեղեկագրինց իմանում ենք, որ դպրոցն ունէր 450 մանչ ու աղջիկ աշակերտ, 16 դասարան, 11 մնայուն ուսուցիչ, շաբաթական 254 դաս, դպրոցի ամսական ընդհանուր ծախսը 1417 ղրշ. 113 ռուբ. 35 կոպէկ): Ճիշդ այս դպրոցների վիճակն ունէին նաև Վանի միւս ծխական վարժարանները. այժմ երևակայեցէք ամսական 113 ռուբլիով 16 կարգից բաղկացած 450 աշակերտներ պահելու Դրա վրայ աւելացրէք դպրոցների միւս պակասութիւնները. օր.՝ աշակերտների մի մասը գրասեղանները չլինելու պատճառով նստում է տախտակամածների վրայ, ուսուցիչների և աշակերտների համար պակասում են շատ ձեռնարկներ և դասագրքեր. աշակերտներն այս կամ այն դասի համար իրանց ձեռքում գիրք չունենալու պատճառով ստիպուած են կամ իրանց յիշողութեանն ապահինել կամ տետրակներում նշանակել. բնագրիտական դասերի համար գործիքներ չկան, աշակերտները պարտաւորուած են տետրակներում գրածներով և գծածներով բաւականանալ. աշխարհագրութեան քարտէզներ նոյնպէս չըկան, մեծ մասամբ քարտէզները աշակերտների գծածներն են:

Կովկասի գիւղական երկդասեան դպրոցների չափ էլ նիւթական բիւջէ չունեցող Վան քաղաքի ծխական վարժարանները գրեթէ միջնակարգ դպրոցի ծրագրով (10 տարուայ ընթացքով) էին ընթանում և պոլսեցիների հետևողութեամբ այնպիսի փքուն, փայլիլուն առարկաների անուններ էին մտցնում իրանց ուսումնական ծրագիրների մէջ, որոնցով աշակերտների ուղեղը յոգնեցնելուց զատ ուրիշ ոչ մի արդիւնք չէր տեսնուում. ահա այդ առարկաներն իրանց գործածական անունով. — հայերէն աշխարհագր և գրաբար, թիւքերէն, ֆրանսերէն, կրօն (հին և նոր ուխտ), ազգային, եկեղեցական և ընդհանուր պատմութիւններ, Վանի և Հայաստանի հին աշխարհագրութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, բնագրիտութիւն, բնական պատմութիւն, մարդակազմութիւն, առողջապահութիւն, ուսումնական աշխարհագրութիւն կամ տիեզերագրիտութիւն, բնական աշխարհագրութիւն կամ երկրաբանութիւն, բնական պատմու-

թեան փրկիսփայութիւն, տարբարանութիւն, թուաբանութիւն, հանրահաշիւ, ազգային և եղեղեցական երգեցողութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն, մարմնամարդութիւն, նաև կենդանաբանութիւն, իրագիտութիւն:

Տեսնում էք, 25-ի չափ առարկաներ էին մտնում ձխական վարժարանների մէջ. փքուն չէ՞ այդ ծրագիրը, թէև կատարեալ անուանական. 15—16 տարեկան աշակերտը բնական պատմութեան փրկիսփայութիւն է դաս առնում. կովկասահայ ընթերցողները գուցէ առաջին անգամն են լսում այս անունը.—ուրբ՞ր էին այս անունները կրող առարկաների ուսուցիչները.—Վանի այս կամ այն դպրոցի շրջանաւարտ (!) կամ թերաւարտ աշակերտները, որոնք բաւական էր, որ իրանց յանձնուած դասի համար ունենային որևէ ձեռնարկ—տեսլակ կամ գիրք, թէկուզ գիրքը 50 տարի առաջ Վենետիկի Մխիթարեանների տպարանում տպուած լինէր, բաւական էր, որ այդ ուսուցիչն իր չարաչար ինքնիշխանութեամբ շատ թէ քիչ կարողանար գրքի բովանդակութիւնն ըմբռնել, նա իր հասկացածը պիտի աւանդէր իր աշակերտներին, հոգը չէր, թէ հասկացող չկար. գոնէ անգիր կարողանային սովորել, այդ էլ մի բան էր:

Տնտեսական կեանքի պայմանները վերջին տարիներումս Վանի կրթական գործի և նրա վարչական բեժիմի վրայ էլ ազդեցութիւն գործեցին: Հանգամանքները եկան վանեցիներին համոզելու, թէ ներկայ դպրոցներն իրանց օգային ծրագիրներով, անվերջանալի «ութիւններով» չեն կարող գործնական մարդիկ պատրաստել ներկայիս մէջ, ուր հացի կոխն ահռելի կերպարանք է ստացել: Դպրոցի վարիչները գիտակցաբար կամ անգիտակցաբար պաշտպանած իրանց ուղղութեան սխալ լինելը խոստովանեցին կամ աւելի ճիշտը՝ ժողովրդի պահանջների առջև տեղի տուին և սկսեցին միջոցներ ձեռք առնել դպրոցները շատ թէ քիչ գործնական ճանապարհի վրայ բերելու: Բոլոր ձխական վարժարանների վարչութիւններն էլ համաձայնեցին կրճատել իրանց դպրոցների 10-ամեայ ընթացքը, վերցրին ուսումնական ծրագրի միջից մի շարք անպէտք առարկաների ուսումը. դպրոցական վարիչ մարմինները տեսնելով որ այլևս անկարելի է 500 աշակերտ կառավարել ամսական 120 բուրլով, տեսնելով որ աննպատակ է 10-րդ տարուան աշակերտի կրթութեան գործը յանձնել մի ուսուցչի, որը 5-րդ տարուայ աշակերտին անգամ չի կարող գոհացնել, տեսնելով որ ա. տարին 50—60 հոգուց բաղկացած կարգը մինչև 10-րդ տարին հասնելը հազիւ կարողանում է 2 կամ 3 աշա-

կերտ պահել «ընխացաւարտ» անուանելու համար, վերջապէս տեսնելով՝ որ եղած բոլոր նիւթական և բարոյական զոհողութիւններն իզուր տեղը ոչնչանում են և շատ աննշան արդիւնք են ցոյց տալիս, յանձն առին թաղային վարժարաններին տարրական նախակրթարանների համետ կերպարանք տալ վեցամեայ կոկիկ ծրագրով:

Այս դրութեամբ թերևս թաղային տարրական նախակրթարաններն իրանց 6-ամեայ ծրագրով աւելի կանոնաւոր ուսում և կրթութիւն կարողանան մատակարարել իրանց դիմողներին, քան թէ նախկին տասնամեայ «նախակրթարան-ուսում-նարանները»: Բայց և այնպէս դեռ ներկայ դրութիւնն էլ գոհացուցիչ վիճակ ունենալուց շատ հեռու է, դեռ այս դպրոցները տնտեսապէս շատ աղքատ են, նիւթական բիւջէն շատ անձուկ է: Որպէսզի Վանի ծխ.-թաղային նախակրթարանները կարողանան փափազելի իրական նպատակին ծառայել, անհրաժեշտաբար պէտք է ունենան՝ 1. բարեխիղճ, ուղղամիտ, գործունեայ և իրանց կոչումն ըմբռնող թաղային խորհուրդներ. 2. բարեխղճութեան և պարտաճանաչութեան չափ կարողութիւն և հմտութիւն ունեցող ուսուցիչներ, որոնց պակասը խիստ ըզզալի է (անշուշտ նորակազմ Կենտրոնական վարժարանն այդ թերին կը լրացնէ), և 3. նիւթական շատ թէ քիչ կանոնաւոր վիճակ:

Այս երեք կարևոր պայմաններից էլ դեռ զուրկ են Վանի դպրոցները:

Այժմ դնենք այստեղ Վան քաղաքի դպրոցների 1902/903 ուս. տարուայ տեղեկագիրներից միջանի կարևորագոյն կըտորներ: Այս մասին ընդհանուր կերպով այս պէտք է ասենք, որ դպրոցի տարեկան ուսումնական և տնտեսական վիճակի տեղեկագիրն ամեն տարի հասարակութեանը ներկայացընելու դրութիւնը նոր վերջերս է ընդհանրացել Վանում, այդ պատճառով այդ տեղեկագիրները երբեմն այս կամ այն կէտերում թերի են մնում:

Սկսենք ծխական վարժարաններից.

Արարուց Ս. Թարգմանչաց երկսեռ վարժարան.

1902/903 ուս. տարի.

	Աշակերտների թիւ տարուայ վերջում	248	
	Աշակերտուհիների թիւ տարուայ վերջում	209	
"րէց	{	Թողաւար աշակերտների և աշակերտուհիների թիւը	160
		ձրիավարժ	297
	2բիւրավարժներից նպատ ևն ընդունել դպրոցից . . .	63 հոգի	
	մանչերի դասարանների թիւ տարուայ վերջում . . .	7	
	աղջիկներ " " " " . . . . .	8	

մանչերի բաժնի դասերի տարեկան ժամերի դումարը . . . . .	4608
աղջիկների » » » » » . . . . .	4896
ուսուցիչների թիւը . . . . .	9
վարժուհիների թիւը . . . . .	3

**Դպրոցի տարեկան ընդհանուր ծախսերի գումարն է 22060 դր2.**

եկեղեցու սնդուկը վճարել է . . . . .	17200	դր2.
վճարուած տարեթոշակ (աշակերտների և աշակերտուհիների) . . . . .	3100	»
չբաւոր աշակերտներին օգնող մարմինը վճարել է . . . . .	1760	»
<hr/>		
Ընդամենը		22,060 »

**Սորաշէնու Ս. Յովհաննիսեան վարժարան.**

1902,903 ուս. տարի.

Աշակերտների թիւը տարուայ վերջում . . . . .	234	
որից } թոշակաւոր աշակերտ . . . . .	105	
	ձրիավարժ » » . . . . .	129
ձրիավարժներից՝ դպրոցի սնդուկից նպաստ են ստացել . . . . .	37	հոգի
գասարանների թիւը . . . . .	7	
դասերի տարեկան ժամերի գումարը . . . . .	4208	
ուսուցիչների թիւը (մնայուն և այցելու) . . . . .	6	

**Դպրոցի տարեկան ընդհանուր ծախքերի գումարն է 12,370 դր2.**

եկեղեցու սնդուկը վճարել է . . . . .	9,620	դրու2
աշակերտների վճարած տարեթոշակն է . . . . .	2750	»
<hr/>		
Ընդամենը		12,370 »

**Յանկոյանների Ս. Մարկոսեան վարժարան.**

1902,903 ուս. տարի.

Աշակերտների թիւը տարուայ վերջում . . . . .	210
որից } թոշակաւոր աշակերտ . . . . .	73
	ձրիավարժ » » . . . . .
գասարանների թիւը . . . . .	6
դասերի տարեկան ժամերի գումարը . . . . .	3689
ուսուցիչների թիւը (մնայուն և այցելու) . . . . .	6

**Դպրոցի տարեկան ընդհանուր ծախսերի գումարն է 10,800 դր2.**

եկեղեցու սնդուկը վճարել է . . . . .	8850	»
թոշակաւոր աշակերտները վճարել են . . . . .	1950	»
<hr/>		
Ընդամենը		10,800 «

Քաղաքամիջի Յիսուսեան-Շուշանեան վարժարանները.

1902/903 ուս. տարի.

	Մշակերանների թիւը տարուայ վերջում . . . . .	148
	Մշակերտուհիների թիւը » » . . . . .	97
ուրից	} թոշակաւոր աշակերտ և աշակերտուհի . . . . .	78
		} ձրիավարժ » » . . . . .
	ձրիավարժներից նպաստ են ընդունել . . . . .	37 հոգի
	մանչերի դասարանների թիւը տարուայ վերջում . . . . .	6
	աղջիկների » » » . . . . .	7
	ուսուցիչների թիւը (մնայուն և այցելու) . . . . .	7
	վարժուհիների թիւը . . . . .	2
	մանչերի բաժնի դասերի տարեկան գումարը . . . . .	4258
	աղջիկների » » » » . . . . .	3762

Գպրոցի տարեկան ծախսերի ընդհանուր գումարն է 13,270 դր2.

եկեղեցու օնդուկը վճարել է . . . . .	11950	»
թոշակաւոր աշակերտները և աշակերտուհիները վճարել են . . . . .	1040	»
Աղքատախնամ մարմինը վճարել է . . . . .	208	»

Ընդամենը 13,270 »

Ծանօթութիւն.—Արարուց ս. Թարգմանչաց վարժարանն ունի երկյարկանի շատ յարմարաւոր մի շէնք: Թէ մանչերը և թէ աղջիկները միևնոյն շէնքի վերի յարկումն են ամփոփուած: Ուսուցչական խումբը մէկ է երկու բաժնի համար:

Նորաշէնու ս. Յովհաննէս վարժարանի շէնքը խարխուլ է և անյարմար, նորոգութեան պէտք ունի, ծխականներն արդէն մշակուած են այդ խնդիրը: Վանի եկեղեցիներից նորաշէնու եկեղեցին ամենաքիչ կալուած ունեցող եկեղեցին է, բայց վերջին աւարիները իր ծոցը հաւաքելով քաղաքի հարուստ ծխականներին՝ նրանց նուէրներով լրացնում է իր դպրոցի նիւթական համեստ ընդէն:

Յանկոյսների ս. Մարկոսեան վարժարանի շէնքը 1896-ի աղետին այրուելով՝ վերանորոգուեց անլի կանոնաւոր կերպով. երկյարկանի է: Դժբախտաբար լիշեալ աղետն այս դպրոցին այնպիսի հարուած տուաւ, որ դեռ մինչև հիմա դպրոցը չի կարողացել իր նախկին դիրքը դանել: Գպրոցի հետ այրուեց նաև եկեղեցին, ծխականները կուպէկ-կուպէկ հաւաքած գումարով դպրոց շինելուց յետոյ ձեռնարկեցին եկեղեցու նորոգութեան, որ դեռ բոլորովին վերջացած չէ. եկեղեցու մեծածախա շինութիւնը դպրոցը նիւթական նեղութեան մասնեց. շնայած որ դպրոցի ընդէն 8850 դուրու է դժուած, բայց փող չկայ, պաշտօնեաները պահանջում են 7—8 ամսուայ, նոյնիսկ մի տարուայ ուժիկ:

Յիսուսեան-Շուշանեան երկսեռ վարժարանի արական բաժինն, այսինքն Յիսուսեան վարժարանն ունեցել է երբեմն իր փայլուն, ինչպէս նաև փոթորկալից շրջանները: Ներկայումս վայելում է անդորրութիւն. Քաղաքամիջի եկեղեցիների միացումով շատ թէ քիչ ապահովուեց այս դպրոցի նիւթական համեստ վիճակը, թէև Վանի ուսուցիչներից շատերը հին պահանջներ ունին իրանց ու-

ճիկներէ ապառիկ հաշովն, բայց ներկայումս ամբողջ պաշտօնեաները գրեթէ ամսէամիս ստանում են իրանց ուժիկը. դա բացառիկ և եղական երևոյթ է Վանի ծխական վարժարանների մէջ:

Ահա սրանք են Վանի տարրական չորս վարժարանները, որոնք ներկայումս միօրինակ ծրագրով են ընթանում և իրանց շրջանաւարտներին 6-ամեայ շրջանով նախնական համեստ կըրթութիւն տալուց յետոյ՝ ցանկացողներին ուղարկում են Վանի նորաբաց Կենտրոնական վարժարանը միջնակարգ կըրթութիւն ստանալու:

Վանն ունի ուրիշ երկու տարրական նախակըթարան էլ, մէկը Ս. Յակոբի և միւսը Հայկավանքի թաղում: 1896-ի աղետը ամենից աւելի զօրաւոր հարուածն այս երկու թաղերին հասցրեց: Այս երկու թաղերն էլ գրեթէ բոլորովին ամայացան, այժմ հազիւ նախկինի քառորդի չափ բնակութիւն լինի այս տեղերը. թէև թէ մէկ և թէ միւս թաղերումն էլ 2—3 տարուց ի վեր բացուել են վարժարաններ, բայց տակաւին շատ անկերպարան վիճակի մէջ են գտնուում: Գուցէ սրանցից առաջինն, այսինքն ս. Յակոբ թաղի Ղուկասեան վարժարանը կարողանայ 1—2 տարուց յետոյ կանոնաւորուել և միւս ծխական վարժարաններին հաւասար ծրագիր և բիւջէ ունենալ, բայց միւսը՝ Հայկավանքի դպրոցը դեռ շատ ուշ կարգի կ'ընկնի, եթէ միայն կարելի լինի:

Ինչպէս տեսանք, Վանի թաղերից Այգեստանի բաժնում միայն, ինչպէս նաև Արարքում և Քաղաքամիջումն էլ, միացած եկեղեցիներն ունին երկսեռ վարժարան, իսկ միւս թաղերը իգական սեռի համար չունին: 1896 թուի աղետը փակել տուեց Յանկոյսների իգական սեռի վարժարանը—Գայիանեան դպրոցը: 1903 թուի սեպտեմբերին բացուեց նոյն թաղում իգական վարժարան, բայց դեռևս շատ աննշան և անկերպարան վիճակի մէջ է գտնուում: Ներկայումս ունի երկու վարժուհի, մէկ այցելու ուսուցիչ և 40-ի չափ մանրիկ աշակերտուհիներ:

Իսկ Նորաշէն թաղում կայ իգական սեռի համար Սանդըխտեան վարժարանը, որ 1870 թուից սկսած մինչև այժմ պահում է իր գոյութիւնն: Աւելի քան 30 տարուայ ընթացքում այս վարժարանն իր յարատևութեամբ բաւական համեստ դեր է կատարել Վանի իգական սեռի դաստիարակութեան գործում, կարելի է նոյնիսկ ասել՝ վանեցիների հասարակական կեանքում:

Այս դպրոցը մինչև նախանցած տարի կառավարուում էր գլխաւորապէս մեծանուն բարեգործ Մկրտիչ Սանասարեանի կտակադրամի տոկոսներով և աշակերտուհիների թոշակներով:

նախանցած տարի սրանց վրայ աւելացաւ նաև հանգուցեալ Գ. Ա. Սերբերենիկովի կտակաբաժինն: Ինչպէս յայտնի է, Գ. Սերբերենիկովի կտակաբաժնից 24,000 ռուբլի յատկացուած է Վանի երկու դպրոցներին—Հայկազեան-Կենտրոնական և Սանդրխտեան վարժարաններին. այդ գումարի տոկոսի կէսը ընկնում է Սանդրխտեանին: Մինչև նախանցած տարի Սանդրխտեան վարժարանն ամեն տարի ընկնում էր պարտքի տակ, պաշտօնեաները կանոնաւոր ոտճիկ ստանալ չկարողանալով նեղուժ էին, այժմ այս նոր կտակը կ'ազատէ դպրոցն այդ անպատեհութիւններից, որով սրանից յետոյ հնարաւորութիւն կ'ունենայ նախկինից աւելի կանոնաւոր վիճակ և յարատեւութիւն վայելելու. մնում է որ վարժարանի հոգաբարձութիւնը համարձակութիւն ունենայ մի քիչ փոփոխութիւն մըտցնելու դպրոցի ուսումնական բաժնի կազմակերպութեան մէջ: Ներկայ ուսուցչական խումբը որքան որ բարեխղճութեամբ է վերաբերուում դէպի իր կոչումը, բայց և այնպէս չի կարելի չխոստովանել, որ անձեռնհաս է դպրոցն իր վայել դիրքի վրայ պահելու: Անցեալ ուսումնական տարուանից սկսած Սանդրխտեանն ունենում է տարեկան մօտ 140 օսմ. լիրայի հաստատուն եկամուտի աղբիւր, այդ գումարով կարող է եղածից աւելի կանոնաւոր ուսուցչական խումբ պահել, և մեզ վստահացնում են, թէ հոգաբարձութիւնն այս տարուայ համար նոր կարգադրութիւններ անելու որոշման կողմն է հրևում. եթէ ճիշտ է դա, ուրախալի է, դպրոցի շահն այդ է պահանջում: Վանի իզական վարժարանների Կենտրոնականն էլ Սանդրխտեան վարժարանը կը լինի: Այժմ այս դպրոցն ունի 10 տարուայ ընթացք:

1902/903 ուս. տարուայ տեղեկագիրը.

Աշակերտուհիների թիւն է 225, որոնց մեծագոյն մասը պատկանում է Նորաշէնի թաղին, իսկ փոքրագոյն մասը Յանկոյաների, Արարբի և ս. Յակոբի թաղերին. թոշակաւոր աշակերտուհիների թիւն է 98, իսկ մնացածները ձրի են. մնացում պաշտօնեաների թիւը 6, որոնցից 4-ը վարժուհի և 2 ուսուցիչ, իսկ այցելու ուսուցիչների թիւը 4. դասարանների թիւն է 10. շքաթական դասերի թիւն է 136, տարեկան դասերի թիւը 1365, թոշակաւոր աշակերտուհիների վճարած տարեթոշակի գումարն է 2460 զրդ.:

## Ելիմուքք.

## Մ ու տ ք.

Բարերար Մ. Սանասարեանի կտակի տոկոսը 55 լիբա . . . . .	5,940 դր.
աշակերտուհիների թոշակից . . . . .	2,460 »

---

Ընդամենն 8,400 »

## Ծ Լ ք.

Պաշտօնեաների ուճիկ . . . . .	10,044 դր.
ներքին ծախսեր . . . . .	670 »

---

Ընդամենը 10,714 »

Ինչպէս տեսնում էք, ելքը մուտքից աւելի է, այդ բացը ծածկուում է Սերերբրեննիկովի կտակից ստացուած գումարով. դպրոցն ունի նաև խանութ, որից վերջերս աննշան շահ է ըստանում. 2 տարին մի անգամ դպրոցը աշակերտուհիների ձեռագործները վիճակահանութեան է դնում և 5 - 600 դր. մուտք էլ այդտեղից է ունենում:

Ծխական և Կենտրոնական վարժարաններից անկախ Վանում գոյութիւն ունի մի ուրիշ անհատական վարժարան. դա Երամեան Համբարձուովի Հայկական Որբանոցի վարժարանն է: Այդ դպրոցն իր քսանհինգամեայ պատկառելի գոյութեամբ, իր դիրքով, տուած արդիւնքով և Վանի պէս համեստ միջավայրի մէջ կատարած իր համեստ դերով Վանի դպրոցների մէջ ամենակարևոր տեղն է բռնում: Անշուշտ ներելի պիտի համարուի, եթէ միքիչ կանգ առնեմ այս դպրոցի վրայ. քանի որ անցեալ տարի լրացաւ այս դպրոցի քսանհինգամեակն, արժէ երկու խօսք ասել նրա մասին:

Հայկական որբանոցի վարժարանը հիմնուած է 1878 թուին Հ. Երամեանի ջանքերով. սկզբում դպրոցը տնտեսապէս կառավարուում էր «Մնամատար» ընկերութեան հայթայթած միջոցներով, գիշերօթիկ էր, ունէր 30-ի չափ գիւղացի և քաղաքացի սաներ: 1882-ին, երբ լուծուում է «Մնամատարը», գործի շարունակութիւնը մնում է աչազուրկ Երամեանի վրայ, որ գիշերօթիկ որբանոցը դարձնում է ցերեկեայ անհատական վարժարան՝ որբերի հետ ընդունելով նաև թոշակաւոր աշակերտներ: Երամեանը դպրոցի ղեկը որևէ մարմնից անկախ իր

ձեռքում պահելով՝ յաջողում է տարէցտարի բարձրացնել իր դպրոցի դիրքը և հասարակութեան ուշադրութիւնը հետզհետէ իր վրայ դարձնել։ Ընդ այն կողմը ծխական վարժարանների բազմին ապիկար, տէ՛տ, անձնասէր թաղական աղաների ձեռքի խաղալիք էր դարձել, մինչ այդ դպրոցներն իրանց խղճուկ և ողորմելի գոյութիւնը հազիւ էին պահպանում, Երամեանի դրպրոցը յաջողում է իր կանոնաւոր յարատեւութեամբ, իր ձեռնասուն աշակերտներից պատրաստուած ուսուցչական խմբով, դպրոցական անհրաժեշտ գոյքերով տիպար դպրոցի կերպարանք ստանալ։

Սկզբներում 8, ապա 9 և ներկայումս 10 տարուայ ընթացք ունի այս դպրոցը։ Որևէ հաստատուն եկամուտից զուրկ՝ այս անհատական վարժարանը բացառաբար կառավարւում է աշակերտների թոշակներով։

25 տարուայ ընթացքում դպրոցը տուել է 13 կարգ շրջանաւարտներ, շրջանաւարտների թիւն է 74։ դպրոցում աւանդուած են նոյն առարկաներն, ինչ որ Վանի միւս դպրոցներում։ Աշակերտների մեծագոյն մասը պատկանելով քաղաքի հարուստ դասակարգին՝ դպրոցից դուրս գալով ընտրել է առևտրական ասպարէզ, սակայն և այնպէս հասարակական պաշտօն վարողներն էլ բաւական մեծ թիւ են կազմում։ Հետևեալ թուերն աւելի որոշ գաղափար կարող են տալ մեզ այդ մասին.

#### 74 շրջանաւարտներից

- 37 հոգի առևտրական ասպարէզի վրայ են գործում.
- 21 » ուսուցիչ են ներկայումս.
- 10 » արհեստաւոր.
- 2 » արտասահմանում ուսանող.
- 2 » ազարակապան և 1 փաստաբան։

Սրանից դուրս են մնում այս տարուայ 3 շրջանաւարտները։ որոնցից 2-ը առևտրի պիտի գնան, իսկ մէկն արհեստի։

Երամեանի շրջանաւարտները դպրոցից դուրս են գալիս բաւական մեծ պաշարով, համեստ զարգացումով։

Իր 25-ամեայ գոյութեամբ այս վարժարանն ունեցել է հետևեալ առաւելութիւնները և տուել է այս օգուտներ։

Իբրև անհատական վարժարան մէկ հոգու ձեռքում զըտնուելով՝ ազատ է մնացել 7—10 անդամներից բաղկացած թաղական խորհուրդների անխիղճ ոտնձգութիւններից։

Ունենալով Երամեանի պէս աչազուրկ, բայց վերին աստիճանի ճարպիկ, ժրջան, մանկավարժութեան գործին ծանօթ մի հիմնադիր-տնօրէն՝ կարողացել է ժողովրդի կամ գոնէ իրան դիմողների վստահութեանն արժանանալ։

Յաջողել է հարուստ դասակարգին ներշնչել սէր դէպի դպրոցը, համակրութիւն դէպի կրթական հաստատութիւնները:

Տուել է հասարակութեան եղածներից համեմատաբար աւելի կարող ուսուցիչներ:

Իբրև ծխական վարժարանների ախոյեան ստիպել է նրանց, որ գէթ կրիայի քայլերով իրանց կանգնած վիճակից դուրս գան. արդարև ծխական վարժարաններն այսօր իրանց ունեցածը մասամբ պարտաւոր են Երամեանի դպրոցի հետ ունեցած մըրցման. եթէ չլինէր ի միջի այլոց և այս դպրոցը, գուցէ ծխականները նոյն վիճակն ունենային, ինչ որ ունէին սրանից 15—20 տարի առաջ:

Եթէ այսօր վանեցիների կարող դասակարգը 5—10 դուրու թոշակ է տալիս դպրոցներին, դա էլ դարձեալ Երամեանի վարժարանի շնորհիւ է, որովհետև մինչև այժմ միայն այս վարժարանն է յաջողել աշակերտից տարեկան մինչև 4 օսմ. լիբա ( $34\frac{1}{2}$  բուբլի) թոշակ առնել:

Երամեանի վարժարանը յաջողել է մերազգի և մանաւանդ օտարազգի ճանապարհորդներին, այցելուներին նպաստաւոր դադափար կազմել տալ վանեցիների կրթասիրական ճաշակի մասին: Երամեան վարժարանը միակն է Վանոււմ, որ ունի բաւական ճոխ դրադարան, որ պարունակում է 500-ի չափ դանազան լեզուներով դասագրքեր, ձեռնարկներ և հանդէսներ. ունի նոյնպէս բաւական թուով բնագիտական գործիքներ, քարտէզներ, կենդանաբանական պատկերներ և հաւաքածոներ:

Ափսոս, որ այս վարժարանը չնայած իր ցոյց տուած արդիւնքին՝ վերջին 2—3 տարիներում նիւթական խիստ անձուկ վիճակի մէջ է գտնուում. թէև այդ անձկութիւնն իր սկզբից էլ ունեցել է, բայց վերջերումս բարձր աստիճանի է հասել. անցած տարի՝ դպրոցը 120 լիբայի պարտք ունէր, հազիւ է փակուած այդ պարտքը. Պոլսում ձեռնարկուած հանգանակութեան շնորհիւ, բայց երևում է, որ այս տարի բիւջէն կրկին բաց պիտի մնայ: Մեզանում երբեմն բարեգործութիւններ կատարուում են, բայց մեր բարեգործները յաճախ օգնութեան ձեռք են պարզում այնտեղ, ուր այնքան պէտք չկայ. կան բարեգործութեան տեղեր, ուր 1 կոպէկը 100 կոպէկի գործ է տեսնում...

Երամեանի ծառայութիւնը Վանի կրթական գործի մէջ շատ կարևոր տեղ է բռնում. նրա դպրոցը նոյնպէս վանեցի հասարակութեան կեանքում նշանաւոր դեր է խաղացել: Որքան էլ անհատական համարուի այս դպրոցը, բայց և այնպէս ազգային համարուած դպրոցներից աւելի ծառայութիւն է արել հասարակութեանը: Անշուշտ կովկասահայ ընթերցողն ան-

հատական վարժարան ասելով անմիջապէս պատկերացնում է իր առաջ թիֆլիզի կամ առհասարակ կովկասեան ուրիշ քաղաքների մէջ գտնուած մասնաւոր դպրոցները, — բայց սխալ է այդ ենթադրութիւնը՝ Երամեանը գործում է ոչ թէ իր անձընական շահի համար, նրա դպրոցը դիմողը ոչ թէ ստանում է մասնաւոր կրթութիւն գիտութիւնների, լեզուների կամ արհեստի ու գեւարուեստի այս ու այն ճիւղերում, այլ բառի բուն իմաստով ազգային կրթութիւն: Նրա աշակերտը մայրենի լեզուի հետ սովորում է նաև պետական լեզուն և եւրոպական լեզուներից ֆրանսերէն, թուաբանութեան հետ կրօն, բնագիտութեան հետ եկեղեցական պատմութիւն, բնալուծութեան հետ ազգային պատմութիւն, հաշուապահութեան հետ հայրենագիտութիւն:

Երամեանը 25 տարուայ ընթացքում իբրև դպրոցի տէր դեռ ևս բազմ չի ունեցել տարեկան 50 լիբայի գումար ստանալ իբրև իր աշխատութեան վարձ: Ընդհակառակն՝ նա իր ունեցածն էլ դպրոցի վրայ է դրել: Իր հայրենական ժառանգութիւնը վաղուց է ծախսել դպրոցի հաշուին: Երամեանն իր գոհունակութիւնը և մխիթարութիւնը նիւթական շահի մէջ չի փնտրել. իր դպրոցի բարոյական դիրքը, վայելած համբաւը կազմում են Երամեանի բարձրագոյն իրէջալը: Նա յանձն է առել ամեն տեսակ ֆիզիկական, նիւթական նեղութիւններ իր դպրոցում իր նկատած թերութիւնները վերացնելու համար, նա իր աչազուրկ վիճակում ներկայանում է իբրև մարմնացած եռանդ, նա սիրում է իր գործը, պաշտում է իր գործը, նա իր հսկայ և հոյակապ գործի գերին է. չեմ լսել, չեմ ճանաչում և չեմ կարող երևակայել մեր ժողովրդի մէջ ուրիշ մի անձնաւորութիւն, որ այսքան յարատև անձնուիրութիւն ցոյց տայ հայ դպրոցական գործում: Դպրոցի ամբողջ վարչութիւնը՝ թէ տնտեսական և թէ կրթական՝ միայն Երամեանի ձեռքումն է և այնպէս կանոնաւոր է ընթանում, որ կարծես թէ մեքենա լինի, հոգ չէ թէ ղեկավարը տարուայ սկզբից մինչև վերջը մտատանջութիւններով է անցկացնում իր բոլորները: Այնինչ Վանի ծխական վարժարանների նահատակ ուսուցիչները 5—6 ամիսներով և նոյնիսկ ամբողջ տարով առանց ոռճկի են պաշտօնավարում և զուր տեղը կօշիկ են մաշում խորհրդարան մտնելով ու ելնելով կամ այս ու այն թաղական աղայի ոտքը լիզելով, Երամեանի ուսուցիչներն ամիսը լրանալուն պէս առանց դիմումի ստանում են իրանց ոռճիկը, հոգ չէ թէ գիշերներով անքուն է մնացել տնօրէնը, մինչև որ յաջողել է տոկոսով պարտք անել իր պաշտօնեաներին գոհացնելու համար:

Կրկնում ենք, ափսոս, որ այս դպրոցը հետզհետէ նիւթական տազնապի է ենթարկւում: Վանեցիների տնտեսական վիճակը տարէցտարի ազդում է և՛ այս դպրոցի վիճակի վրայ: Վանեցի հարուստ ծնողների զաւակների թոշակներով է կառավարւում այս վարժարանը. Երամեանը յաջողել է հարուստների քսակից տարեկան 2—3 լիրա դուրս հանել. բայց այդ քսակների բերաններն օրէցօր փոքրանում են. դրամական տազնապն, իրական սնանկութիւններն, առևտրի պաղուծիւնն ստիպում են դպրոցի հիմնադիր-տնօրէնին երեկուան 4 լիրա թոշակ վճարողին այսօր ձրի ընդունել:

Եթէ որևէ արտաքին օգնութիւն—մի մեծ գումար չհասնի Երամեանին, հաւանական է, որ այս արդիւնաշատ հիմնարկութիւնը մտալուտ վախճանի մօտենայ:

1903 թուի օգոստոսին պիտի կատարուէր Երամեան վարժարանի քսանեկինգամեակը: Երախտաւոր աշակերտներն իրանց մեծ ուսուցչին արժանաւոր վարձատրութիւն անելու նպատակով որոշեցին նախ իրանց մէջ հանգանակութեան ձեռնարկել և ապա դիմել հանրութեան, քսանեկինգամեակի առիթով հանրութեան ուշադրութիւնը դարձնել Երամեանի արած ծառայութեան վրայ, նպաստ հաւաքել, դպրոցի համար սեփական շէնք շինել և դպրոցի հիմնադրին նուիրել: Յոբելեանի յանձնաժողովի կողմից դիմում եղաւ նախ վանեցիներին և ապա մամուլի ու մասնաւոր անհատների միջոցով թիւրքիայի և արտասահմանի հայ ժողովրդին. օգոստոսը վրայ հասաւ, բայց յանձնաժողովը չկարողացաւ իր գործը վերջացնել, հարկ եղաւ յոբելեանական հանդէսի կատարումը յետաձգել մինչև ներկայ 1904 տարուայ Համբարձման տօնի օրը, որ է նաև Համբարձում Երամեանի անուանակոչութեան տօնի օրը:

Մինչև (1903 թուի հոկտեմբերը) Երամեան վարժարանի քսանեկինգամեակի կարգադիր յանձնաժողովն ստացել էր հետևեալ գումարները.

Երամեանի աշակերտների շրջանակից 170 լիրա.

Վանի հասարակութիւնից . . . . . 30 »

Պոլսում Մանուկ Սմբատեանից . . . . . 10 »

Եգիպտոսի վանեցիների ջանքով հայ-  
թայթուած 55 »

Ամերիկայի » » » 22 դոլլ. (4<sup>1</sup>/<sub>2</sub> լ.)

Վեհ. կաթողիկոսի կողմից . . . . . 100 ռուբլի (12 լ.):

Տեղեկացնում են, թէ 250 ռուբլու չափ Նոր-Արմաւիրում գտնուող վանեցիների շրջանակումն է հաւաքուել: Հանգանակութիւնը շարունակւում էր:

Մենք փափագում էինք, որ մինչև Համբարձման տօնը այս գումարը կրկնապատկուէր և եռապատկուէր, որով կարելի լինէր ոչ թէ միայն դպրոցական շէնք շինել, այլ և ապահովել դպրոցի բարոյական շէնքը, իսկ այդ բանի համար աշակերտների թոշակը բաւական չէ, անհրաժեշտ է ունենալ հաստատուն եկամուտ, անձեռնմխելի գումար:

Ահա դնում եմ այստեղ Երամեան վարժարանի 1902—1903 ուսումն. ասրուայ տեղեկագիրը, որ կարդացուեցու դպրոցի բացման առթիւ կատարուած հանդիսում:

Տարեկան տեղեկագիր Վանայ հայկական Որբանոցի վարժարանի, շրջան ին.

(1902 օգոստոս 1—1903 յուլիս 31).

Նախորդ իր. շրջանը փակուած օրը դպրոցի աշակերտների թիւն էր 227, որից 6-ն ընթացաւորտ եղան:

Ներկայ ին. շրջանի վերջը աշակերտների թիւը հասնում է 215-ի, որոնցից 3 ընթացաւորտ եղան:

Նորեկ աշակերտների թիւը այս շրջանում 25:

Հրաժարուածների թիւը » 31, (սրանցից

16 շուկան են գնացել, 13 ուրիշ դպրոց, 2 զիւղ և քաղաք):

Դպրոցն ունի 10 դասարան տասնամեայ ծրագրով.—4 նախակրթարան, 6 ուսումնարան:

Այս շրջանում դպրոցն ունեցել է մինչև տարուայ վերջը 46 ձրիավարժ և 169 թոշակաւոր աշակերտ, ձրիավարժներից 12-ը որդեգրուած են եղել հանգուցեայ Իւան Պոպովիչի. նոյն վարժարանի աշակերտներից կազմուած որբախնամի և զանազան բարեբարձների կողմից, ուրեմն բուն ձրիավարժների թիւը մնում է 34. ձրիավարժներից ոմանք ստացել են դպրոցից դասական աւարկանիք և ուրիշ պիտոյքներ:

Ուսուցչական խումբը կազմուել է 11 պաշտօնեաններից, որոնցից 2-ը այցելու, իսկ միւսները մնայուն:

Գասաւանդութեան օրեր՝ 224, քննական՝ 11, ընդամէն 235 դպրոցական օր:

Աւանդուած դասերի ընդհանուր գումարը լինում է 8643 ժամ, շաւանդուած դասերինը՝ 285 (գլխաւորաբար ուսուցիչների տկարութեան պատճառով): Ուսուցչական ժողով 39, փորձնական դաս՝ 19, դպրոցական հանդէս 3 անգամ:

58 աշակերտ ամբողջ տարուայ ընթացքում ոչ մի ժամ բացակայ չեն մնացել դպրոցից.

57 աշակերտ՝ 1—20 ժամ բացակայ են մնացել,

50 » 11—30 »

40 » 31—100 »

10 » 100-ից աւելի:

Այս շրջանում դպրոցը նուէր է ստացել Պոլսի և Իդմիրի 2—3 հանդէսներ:

## Մ ու տ ք.

Աշակերտների տարեթռակ . . . . .	20527	դր.
Իւան Պողովիչի 5 որդեգրի թռակ . . . . .	1296	»
Դպրոցի Որբախնամի 4 որդեգրի թռակ . . . . .	378 <sup>1</sup> / <sub>4</sub>	»
Մկրտիչ էֆ. Քորոսեանի 1 » . . . . .	479	»
Ղանդ էֆ. Աղաղբցեանի նուէր . . . . .	54	»
Գրադարանից ծախուած գրքերից . . . . .	435 <sup>1</sup> / <sub>2</sub>	»
Ամեն. պատրիարք հօր հրամանով ի հաշիւ նախկին պարտուց կատարուած ծանօթ հանգանակութիւնից . . . . .	6507	»

Գումարը 30171<sup>3</sup>/<sub>4</sub> »=241,74 բուր.

## Ե Լ ք.

Պաշտօնեաների տարեկան ուճիկ . . . . .	20360
Դպրոցի շէնքի տարեկան վարձը . . . . .	1728
Տոկոս . . . . .	650 <sup>1</sup> / <sub>2</sub>
Վստարան և վառելիք . . . . .	724 <sup>2</sup> / <sub>4</sub>
Գրական պիտոյք, լրագիր կայն . . . . .	1396
Գրատեղան, ապակի, խնցեղէն կայն . . . . .	349 <sup>1</sup> / <sub>2</sub>
Որդեգրերի վրայ հղած ծախք . . . . .	228 <sup>1</sup> / <sub>2</sub>
Պոստի ծախք . . . . .	219 <sup>1</sup> / <sub>4</sub>
Ջանադան . . . . .	780
Հիմնադիր-տնօրէնի վարձը մուտքից աւելացած . . . . .	3618 <sup>1</sup> / <sub>2</sub>

30171<sup>3</sup>/<sub>4</sub>

Այժմ երկու խօսք էլ Համբարձում էֆէնդի Երամեանի կենսագրութիւնից:

Հ. Երամեանը ծնուել է Վանի Այգեստանի Ս. Յակոբ կոչուած թաղում 1850 թուի մայիսի 1-ին. հայրը կոչուում էր մահտեսի Յարութիւն Երամեան:

Երամեանի իր տարրական կրթութիւնն ստացել է Ս. Յակոբի և Յանկոյսների թաղային վարժարաններում. 1864 թուին սկսում է դպրոց գնալ. 1868 թուի նոյեմբերին բռնուում է ծաղիկ հիւանդութեամբ և զրկուում է իր զոյգ աչքերից 11<sup>1</sup>/<sub>2</sub> տարեկան հասակում. բայց իր ընդունակութիւնը առիթ է տալիս իր ուսուչիչներին քաջալերել պատանի-աչազուրկին շարունակել իր ուսումը, մինչև որ 1873 թուին Ս. Յակոբի դպրոցում օգնական-ուսուցչի պաշտօն է ստանում, իսկ 1885-ին Քաղաքամիջի Յիսուսեան վարժարանում:

Երիտասարդ Երամեանը 1878 թ. յուլ. 13-ին իր մտերիմնե-

րի հետ հիմնում խնամատար Ընկերութիւնը, որի նպատակն էր որբեր կրթել և խնամել նորաբաց Որբանոցի մէջ, 1882-ին խնամատարի լուծուելուց յետոյ գործի շարունակութիւնը մընում է Երամեանի վրայ, որ հազարաւոր դժուարութիւններու խոչնդոտների յաղթելով՝ իր դպրոցը բերում հասցնում է այստեղ:

Երամեանը ամուսնացել է 1881 թուին, ունեցել է շատ զաւակներ, որոնցից ողջ են 5 մանչ և աղջիկ մեծ որդին Վարդանը երեք տարուց ի վեր սովորում է Պոլիս Ռոբերտ Կլոնելում. հայրը իր յոյսն այս զաւակի վրայ է դրել, սա պիտի շարունակի իր հօր գործը:

Երամեանը թէև հազիւ կարողացել է տարրական կրթութիւն ստանալ Վանի խղճուկ ծխ. վարժարաններում, բայց մօտ կէս դար գլորուող իր կեանքում իր չափազանց աշխատասիրութեան շնորհիւ յաջողել է ձեռք բերել բաւական մեծ զարգացում. ունի լաւ ըմբռնում, յիշողութիւն, երևակայութիւն, դատողութիւն նաև, հաստատամտութիւն, կամքի սովորութիւն և յարատևող ոգի:

Հմուտ է մայրենի հին և նոր լեզուներին, ինչպէս Ֆրանսերէնին, մասամբ նաև պետական լեզուին, ուսումնասիրել է ազգային և ընդհանուր պատմութիւնն, իր դպրոցում աւանդում է մայրենի լեզուի, պատմութեան և կրօնի դասերը:

Երամեանը ճառախօսի համեստ համբաւ էլ է վայելում. խօսում է ծանր, տրամաբանօրէն և ազդու:

Իր վերին աստիճանի փափուկ, ծանր և դժուար տանելի պաշտօնը քայքայել է Երամեանի առողջութիւնը, միայն ուսումնական տարուայ սկզբին—արձակուրդին և արձակուրդից յետոյ կարող էք տեսնել նրան բաւական առողջ, կազդուրուած և զուարթ, մնացած ժամանակը նա յոգնած, մտատանջ, տկար է, բայց նա ցոյց է տուել որ, ի սէր իր հոյակապ գործին իր կեանքն էլ չի խնայում:

ԾԵՐՈՒԿ

(Յը շարունակով)